№ 215 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 30 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ

1910

ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 30 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ № 215

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻԾ ԳՐԻԳՈՐ ԱԲԾԵՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 կոպ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրատան տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Խմբագրատան տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

ՀԱՍՑԷՆ. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». TIFLIS, Rédaction «MSCHAK».

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի Մինչեւ ՏԱՐՎԱՑ ՎՃԱՐԸ
3 ՌՈՒԲԼԻ

12 ամսվ.՝ 10 ռ., 6 և 7 ամսվ. 6 ռ., ամսակ. 1 ռ. Ամերիկա՝ տարեկան 6 դոլլար, Եւրոպա՝ 32 ֆր., Պարսկաստան՝ 10 ռ., Թիւրքիա՝ 120 ղրուշ։
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել ճաւ. ճիճ հասցեն, նոյնպէս և 40 կոպ. (կարելի է և նամակագրոշմով)։

Յայտարարութիւնների համար վճարում են. 1 երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին 20 կոպ., վերջին երեսի վրա՝ 10 կոպ.։ Կովկասից դուրս յայտարարութիւնները ընդունվում են բացառապէս Торг. Домъ „Л. и Э. Метцль и К°“ ֆիրմայի միջոցով՝ Մոսկվայում, Պետերբուրգում և Վարշավայում։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Թիֆլիսի Ժողովարան

Այսօր, հինգշաբթի, սեպտեմբերի 30-ին
ԶՄԵՐԱՑԻՆ շինութեան մէջ
ԱՌԱՋԻՆ
ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ
Սինէմատօգրաֆ Ռիչչիի

Երեկոյթին կը նուագէ լարանուագ խումբը։
Հիւրերը՝ անդամների յանձնարարութեամբ՝ մուտքի համար վճարում են—տղամարդիկ 1 ռ., կանայք 50 կոպ.։
Սինեմատօգրաֆի սկիզբը երեկ. ժ. 8½-ին։
(առ.) 1136. 1—1

ՊԱՍՏԱՌՆԵՐ
(ՕԲՕՒ)
ԵՂԲ. ՏԱՐՆՕՊՕԼ
ՖԱԲՐԻԿԱՅԻ
8 կ. սկսած մինչև 6 ը. իւրաքանչիւր փաթեթը (բուլօ)։
Ունի պահեստներ Ռուսաստանի բոլոր մեծ քաղաքներում։
ԲԱԺԱՆՄՈՒՆԲԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ
Գօլովինսկի պր., 21, Արտիստ. Ընկ. շինութ.
Տելեֆօն № 355.
ԳՆԵՐԸ ՖԱԲՐԻԿԱՅԻՆ
ՆՇՄՈՒՇՆԵՐԸ ԶՐԻ
(Հ.շ.) (առ.) 310. 58—54

ԲԺԻՇԿ
Ա. Մ. ՄԿՐՏՉԵԱՆՑ
Նախկին ասսիստէնտ կնախաս. կլինիկայի Մոսկ. Կ. Համ.։
Կանանց հիւանդութիւններ և մանկաբարձութիւն։ Բժշկ. ֆիզիկական մէթօդ։ Հիւանդների ընդունելութիւնը ամեն օր՝ 12—1 ժ. ցերեկ.—ժամանակաւորապէս Բէբուտովսկայա փող. 58, Կանանց հիւանդանոց, տել. № 230. իսկ հոկտ. 4-ից՝ Գելիսմինսկի. 24.
(Հ. շ.) առ. 1135. 2—1

ՎԵՐԱՑԵԼ է ՎՍՏԱՀՈՒԹԻՒՆԸ

—

«Փաստը այն ատիճան հրէշաւոր է, շշմեցուցիչ և սոսկալի, որ վերին ատիճանի ծանր և տխուր մտածմունքների առիթ է տալիս»։

«Մշակի» ընթերցողները, անշուշտ, կը համաձայնեն «Գիւղատնտեսի» այս եզրակացութեան հետ, կարդալով այսօր «Մամուլ» բաժնի մէջ առաջ բերած իրողութիւնը։

Մամուլի պարտքն է լուսաբանել այդպիսի իրողութիւնը։

Փաստը, արդարև, հրէշաւոր է։

Հայ ինտելիգենտը, հայ գործիչը գնում է գիւղացու մօտ՝ նրան օգնելու, նրա համար գիւղատնտեսական դպրոց հիմնելու նպատակով, ուրեմն նրա տնտեսական դրութիւնը բարւոքելու նպատակով։ Գտնվել է և նուիրատու, որ պատրաստ է տալ 75,000 ռ. այդ նպատակի իրագործման համար։

Եւ հայ գիւղացիութիւնը փոխանակ հրճվելու, գրկաբաց ընդունելու ինտելիգենտ գործիչներին և պինդ բռնելու նրանց փեշից՝ մերժում է նրանց օգնութիւնը, մերժում է ընդունել նրանց հիմնելի գիւղատնտեսական դպրոցը։

— Մեզ պէտք չէ ձեր դպրոցը, ձեր օգնութիւնը. շատ շնորհակալ կը լինենք, եթէ մեզ հանգիստ թողնէք,— ասում են գիւղացիները։

Եւ երբ համոզվում և տեսնում են, որ իրանց խնդիրքը, չը բանալու դպրոց, յարգվում է, նրանք ամենաուրախ տրամադրութիւն են ցոյց տալիս, որպէս թէ մի մեծ յաղթանակ են տարել։

Սա առաջին դէպքը չէ, որ հայ գիւղացին մերժում է իր մէջ դպրոցի բացումը։ Մենք գիտենք, որ Բազուի Հ. Կուլտուրական Միութեան ջանքերը՝ բանալ Զանգեզուրում դպրոցներ՝ նոյնպէս հանդիպել են անաջողութեան և դիմադրութեան գիւղացիների կողմից։

Ասել թէ հայ գիւղացին այնքան ագէտ է, այնքան խոր կերպով խարխափում է խաւարի մէջ, որ գաղափար չունի ուսման, դպրոցի և մանաւանդ գիւղատնտեսական դպրոցի օգտակարութեան մասին—մեծ սխալ կը լինէր։ Մեծ սխալ կը լինէր այն պատճառով, որ այդ միևնոյն հայ գիւղացին, հէնց միևնոյն զաղախեցի գիւղացին, քարվանսարեցին ահագին և իր ոյժերից վեր զոհաբերութիւններ է անում յաճախ՝ իր որդուն ոչ միայն միջնակարգ, այլ և բարձր ուսում տալու։ Եւ հարիւրներով, նոյնիսկ հազարներով կարելի է հաշուել գիւղից դուրս եկած հայ բժիշկներին, փաստաբանների շրջան և գ) ուշ շրջանի սիֆիլիս, որի հետ կապված է յաճախ ներքին օրգանների փոփոխութիւնը, որ յայտնի է գումա անունով։ Բազմաթիւ ապացոյցներից երևում է, որ Հաթա այս երեք շրջանների վրա էլ աւելի կամ պակաս ազդեցութիւն ունի։

Բերլինի «Medizinische Klinik» օրգանը դիմումներ է արել Հաթան ձեռքի տակ ունեցող մի ամբողջ շարք մասնագէտների և պատասխաններ ստացել այդ առիթով։

Դրանցից մի քանիսը ես կը բերեմ այստեղ։

Գրօֆեսօր Եադասօն—Բերն

Շրջան ա) Մի բացառութեամբ միայն՝ ազդեցութիւնը խիստ արագ։

բ) Մի բացառութեամբ միայն՝ ազդեցութիւնը խիստ արագ։

գ) Յետադարձ նշաններ ուղեղի լուսեի մի դէպքի վերաբերմամբ միայն։

Գրօֆ. Հեֆսնայմեր—Ֆրանկֆուրտ Մ./վ.

ա) Ազդեցութիւնը լաւ, բայց երբեմն դանդաղ. մեծ մասամբ շաբաթներ տևող։

բ) Հիանալի ազդեցութիւն. սովորաբար 8—14 օրում բժշկութիւն։

գ) Բժշկութիւն 14 օրվայ ընթացքում. ներքին օրգանների նկատմամբ փորձերը պակասում են։

Գրօֆ. Լինգեր—Տիւբինգեն

ա) 2 անգամ նշանները իսպառ անյայտացել են. իսկ 2 անգամ պակասել են միայն։

բ) Երկու դէպքի բացառութեամբ միշտ աջող։

գ) Հինգ դէպքից 3 անգամ կատարելապէս բուժուն, 2 անգամ ոչ կատարելապէս։

Գրիվաս դօցենտ դոկտ. Բերլինգ—Կիլ

ա) 11 հոգուց 7 հոգի ազատ մնացին բոլոր նշաններից. 4 հոգին 6—8 շաբաթվայ ընթացքում երկրորդական լուէսի շրջան անցան։

բ) 56 դէպքում նշանները 2—12 օրվայ ընթացքում անյայտացան, 8 դէպքում ոչ։

գ) 16 հոգուց 9-ը առողջացան. իսկ մէկի վրա ոչ մի ազդեցութիւն չը նկատվեց։

Մեր կլինիկայում ես առիթ եմ ունեցել հետևելու 9 հիւանդի. դրանցից 5-ը առողջացել են, 2-ը (ոսկրի լուէսի ծանր դէպքեր) առողջանալու վրա են, իսկ 2-ի նշանները նորից կրկնվեցին, ամենայն հաւանականութեամբ, որ մենք նրանց միայն 0,3 գրամ էինք սրսկել. մենք նրանց սրսկեցինք երկրորդ անգամ. հետևանքների մասին առայժմ ոչինչ չէ կարելի ասել։

Այս օրինակներից երևում է, որ թէպէտև բազմաթիւ դէպքերում Էրլիխի արսէնօբէնցոլի ազդեցութիւնը անուրանալի է, բայց և որոշ դէպքերում յետադարձ նշաններ են նկատվում և պատահում են նոյնիսկ դէպքեր, որ օրգանիզմը անտարբեր կամ չէզոք է մնում սրսկման դիմաց։ Բայց չը մոռանանք յիշելու, որ այդ դէպքերի մի մասը անշուշտ պատկանում է այն կատէգորիային, որ Էրլիխը արգելում է սրսկել. ապա մի ուրիշ մասը, որի արդիւնքը ցարդ բացասական է եղել և դեռ հսկողութեան տակ է, կարող է պատահել, որ դեռ կենթարկվի պրէպարատի ուշացած ազդեցութեանը։ Այնուհետև խիստ կարևոր է աչքի առաջ ունենալ մի այլ փաստոր, որ պրէպարատի յատկութիւնից դուրս է գտնվում. դա դոզայի քանակութիւնն է։ Սկզբում գրեթէ ամենքը սրսկում էին 0,3 գրամ, երկիւղ կրելով հետևանքներից. սակայն հետզհետէ փորձը ցոյց տուեց, որ դա քիչ է, և դոզան բարձրացաւ մինչև 1,0-ի և դեռ աւելին։ Կրկնութիւնների մեծ մասը պէտք է վերագրել հաւանօրէն դոզայի քչութեանը, թէև վերոյիշեալ օրինակների մէջ յիշվում են նաև կրկնութեան դէպքեր մեծ դոզաների սրսկումից յետոյ։ Միւս կողմից պիտի յիշել, որ պրէպարատը դեռ պատրաստի կերպով չէ գործադրվում, այլ սրսկելուց առաջ զանազան խառնուրդներով պատրաստվում է, և այս ու այն կերպ պատրաստելուց շատ բան է կախված։

Այնուհետև, ինչպէս երևում է, դոզայի ազդեցութիւնը սիֆիլիսի տարբեր շրջանների նկատմամբ տարբեր լինելով հանդերձ՝ տարբեր է նաև նրա ազդեցութիւնը զանազան անհատների նկատմամբ՝ համաձայն իրանց հիւսուածքների յատկութեան։

Այս բոլոր հանգամանքները ի նկատի ունենալով՝ պէտք է ասել, որ Էրլիխ-Հաթան իր բոլոր առաւելութիւններով միասին, որոշ թերութիւններ ևս ունի, որոնք դեռ մի առժամանակ ուսումնասիրութեան և փորձերի կարօտ են։

Բայց սիֆիլիսն ինքն ըստ ինքեան այնքան ահռելի չէ, որքան յետագայում նրանից առաջացած հիւանդութիւնները—այսպէս. կոչված յետսիֆիլիսային հիւանդութիւնները (metasyhililische Krankheiten)։ Այս հիւանդութիւններից գլխաւորներն են՝ մէջքի ուղեղի հիւծուածքը (позвоночная чехотка—Tabes dorsalis) և անդամալուծութիւնը (Paralyse)։

Դժբաղդաբար պէտք է նկատել, որ Էրլիխ Հաթան այդ հիւանդութիւնների դիմաց անոյժ է. թէև մի քանի մասնագէտներ յայտնում են, որ նոր սկսվող յետսիֆիլիսային հիւանդութիւնների նկատմամբ բարերար ազդեցութիւն են նկատել, սակայն միւս կողմից բազմաթիւ փաստեր հաստատում են արսէնօբէնցոլի անզօրութիւնը, երբեմն էլ նոյնիսկ վնասակար հետևանքները։

Էրլիխը հէնց սկզբից լաւ գիտէր, որ իր-մի ջոցը սպեցիֆիկ է սիֆիլիսի իրան դէմ միայն և ոչ յետսիֆիլիսային հիւանդութիւնների դէմ, ուստի բազմիցս յանդիմանական տոնով՝ թէ բանախօսութիւնների ժամանակ և թէ զանազան մասնագէտների և թղթակիցների հետ ունեցած խօսակցութեան ժամանակ՝ բողոքել է, որ հակառակ իր ցանկութեան այդ կարգի փորձեր են լինում, որով աշխատում են իր պրէպարատի վարկը ձգել։ Ոչ միայն թաբիկների և անդամալոյծների նկատմամբ, այլ նոյնիսկ շատ հնացած սիֆիլիտիկների նկատմամբ որոշ ձեռնպահութիւն է պահում նա։

Դառնանք մեր առաջադրած 3-րդ հարցին։

Բերլին Դոկտ. Ա. Շահբազեան

(Վերջը միւս անգամ)

ՍԻՖԻԼԻՍԻ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ ՆՈՐԱԳՈՅՆ ՄԻՋՈՑԸ՝ «ԷՐԼԻԽ-ՀԱԹԱ 606»

II*)

Նախորդ յօդուածում պատասխանեցինք մեր առաջադրած 4 հարցերից առաջինին և ապացոյցներով տեսանք, որ Էրլիխ-Հաթան անպայման սպեցիֆիկ ազդեցութիւն ունի սիֆիլիսի վրա։

Այժմ դառնանք մեր երկրորդ հարցին, որ ամենից կարևորն է և որի դրական պատասխանից միայն կախված է Էրլիխ-Հաթայի իսկական արժէքը։

Հարց 2. Բուժո՞ւմ է արդեօք Հաթան վերջնականապէս սիֆիլիսը թէ՞ նշանները նորից վերադառնում են։

Էրլիխը ինքը որպէս անաչառ գիտնական խիստ զգուշութիւն է գործ դնում իր արտայայտութիւնների մէջ. նա ցոյց է տալիս իր պրէպարատի ներկայումս ցոյց տուած արդիւնքները։ Իսկ ապագայի նկատմամբ նա հաւատացած է, որ կրկնութիւնները չեն լինի, եթէ միայն սրսկվող դէպքերը համապատասխանեն իր դրած պահանջներին, որոնց մասին մենք ստորև կը տեսնենք։

Այստեղ ամենից առաջ պիտի յիշել, որ այն, ինչ որ մի խօսքով սիֆիլիս կամ լուէս է անուանվում, ինչպէս յայտնի է, բաժանվում է 3 շրջանների՝ ա) սկզբնական նշանների շրջան, բ) երկրորդական նշանների շրջան և գ) ուշ շրջանի սիֆիլիս, որի հետ կապված է յաճախ ներքին օրգանների փոփոխութիւնը, որ յայտնի է գումա անունով։ Բազմաթիւ ապացոյցներից երևում է, որ Հաթա այս երեք շրջանների վրա էլ աւելի կամ պակաս ազդեցութիւն ունի։

*) Տես «Մշակ» № 214.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

—

Մամուլի պարտքն է լուսաբանել այդպիսի իրողութիւնը։

Փաստը, արդարև, հրէշաւոր է։

Հայ ինտելիգենտը, հայ գործիչը գնում է գիւղացու մօտ՝ նրան օգնելու, նրա համար գիւղատնտեսական դպրոց հիմնելու նպատակով, ուրեմն նրա տնտեսական դրութիւնը բարւոքելու նպատակով։ Գտնվել է և նուիրատու, որ պատրաստ է տալ 75,000 ռ. այդ նպատակի իրագործման համար։

Եւ հայ գիւղացիութիւնը փոխանակ հրճվելու, գրկաբաց ընդունելու ինտելիգենտ գործիչներին և պինդ բռնելու նրանց փեշից՝ մերժում է նրանց օգնութիւնը, մերժում է ընդունել նրանց հիմնելի գիւղատնտեսական դպրոցը։

— Մեզ պէտք չէ ձեր դպրոցը, ձեր օգնութիւնը. շատ շնորհակալ կը լինենք, եթէ մեզ հանգիստ թողնէք,— ասում են գիւղացիները։

Եւ երբ համոզվում և տեսնում են, որ իրանց խնդիրքը, չը բանալու դպրոց, յարգվում է, նրանք ամենաուրախ տրամադրութիւն են ցոյց տալիս, որպէս թէ մի մեծ յաղթանակ են տարել։

Սա առաջին դէպքը չէ, որ հայ գիւղացին մերժում է իր մէջ դպրոցի բացումը։ Մենք գիտենք, որ Բազուի Հ. Կուլտուրական Միութեան ջանքերը՝ բանալ Զանգեզուրում դպրոցներ՝ նոյնպէս հանդիպել են անաջողութեան և դիմադրութեան գիւղացիների կողմից։

Ասել թէ հայ գիւղացին այնքան ագէտ է, այնքան խոր կերպով խարխափում է խաւարի մէջ, որ գաղափար չունի ուսման, դպրոցի և մանաւանդ գիւղատնտեսական դպրոցի օգտակարութեան մասին—մեծ սխալ կը լինէր։ Մեծ սխալ կը լինէր այն պատճառով, որ այդ միևնոյն հայ գիւղացին, հէնց միևնոյն զաղախեցի գիւղացին, քարվանսարեցին ահագին և իր ոյժերից վեր զոհաբերութիւններ է անում յաճախ՝ իր որդուն ոչ միայն միջնակարգ, այլ և բարձր ուսում տալու։ Եւ հարիւրներով, նոյնիսկ հազարներով կարելի է հաշուել գիւղից դուրս եկած հայ բժիշկներին, փաստաբաններին, տեխնիկներին, ինժենէրներին, որոնց ծնողները, տգէտ և չքաւոր գիւղացիներ, ամենասոսկալի զոհաբերութիւններ են արել, որպէսզի իրանց զաւակներին ուսուցիչ տան։

Ուրեմն հրէշաւոր փաստի պատճառը պէտք չէ որոնել միայն գիւղացու տգիտութեան և անհասկացողութեան մէջ։

Կայ, անշուշտ, և մի աւելի կարևոր, խոր պատճառ, որ պէտք է որոնել և բացատրել։

Մեր կարծիքով՝ այդ ցաւալի երևոյթի գլխաւոր պատճառը պէտք է որոնել այն իրողութեան մէջ, որի վրա այլ ևս աչք չը պէտք է գոցել։ Իսկ այդ իրողութիւնն այն է, որ հայ գիւղացին դադարել է այլ ևս վստահութիւն տածել դէպի հայ ինտելիգենցիան։

Հայ գիւղացին, որ 10—20 տարի առաջ խորին վստահութեամբ և հաւատով էր վերաբերվում դէպի հայ ինտելիգենտը, հայ ուսեալ, կրթեալ անձը, հայ գործիչը, այսօր կորցրել է այդ վստահութիւնը, հաւատը և ընկել է այնպիսի ծայրայեղութեան մէջ, որ նոյնիսկ մերժում է դպրոցը, երբ այդ դպրոցը առաջարկում է նրան հայ ինտելիգենտը։

Հայ գիւղացին ոչ թէ չէ հասկանում, չէ ըմբռնում դպրոցի օգտակարութիւնը, այլ նա երկիւղ է կրում, որ հայ ինտելիգենտի առաջարկած օգնութիւնը դպրոցի ձևով անկեղծ չէ, որ նա՝ դպրոցի դիմակի ներքոյ իրա գիւղացու համար ինչ-որ ՀԱՍԱԿԱՐ նպատակներ ունի։

Եւ դառն փորձառութիւնն է ստիպել նրան գալ այդ եզրակացութեան, որ՝ որքան էլ սխալ է և անիրաւացի, բայց բղխում է իրերի իսկական դրութիւնից։

Իսկ սխալ և անարդարացի մենք համարում ենք նրա համար, որ հայ գիւղացին մի քանի, մի խմբակ ինտելիգենտների երեսից քաշած ՀԱՍԱՆԵՐԻՆ պատասխանատու և համերաշխ է համարում ամբողջ հայ ինտելիգենցիան։

Վերջին տարիների մի քանի ուսուցիչներն և որոշ խմբակի ինտելիգենտ մարդկանց գործունէութիւնը դպրոցական և գիւղացիական ասպարէզում այնքան մեծ ՀԱՍԱՆԵՐ է տուել հայ գիւղացիութեան, այնքան ՀԱՍԱԿԱՐ երևոյթներ են արտադրել և չարիքներ ստեղծել նրա կեանքի մէջ, նրա հոգևոր-մտաւոր և բարոյական-ընտանեկան կեանքի մէջ, որ հայ գիւղացին, որ առաջ հայ ինտելիգենտին համարում էր ազբիւր ամեն տեսակ մաքրութեան, վեհ գաղափարների և ազնուութեան, այսօր խոյս է տալիս նրանից, իբրև ազբիւրից ամեն տեսակ չարիքի, մինչ այն ատիճան, որ նրա ձեռքից ոսկի անգամ ընդունել չէ կամենում։

Ծայրայեղութիւնները առաջ բերին սոսկալի բէակցիա հայ գիւղացու մէջ։ Եւ նա, կորցնելով իր վստահութիւնը, հաւատը դէպի հայ ինտելիգենցիան, այսօր ամենքին մի ջրով է լուանում և մի անունով մկրտում։

Ինչ որ սերմանեցին, այն ևս հրնձում են այսօր։

Այո, վերացվել է հայ գիւղացու վստահութիւնը, հաւատը դէպի հայ ինտելիգենտը, լինի նա աշխարհական թէ հոգևորական։

Մինչև որ հայ ինտելիգենտը չը կարողանայ վերականգնել հայ գիւղացու աչքում նախկին վստահութիւնը և հաւատը, դժուար թէ նրա ջանքերը յաջողուն հայ գիւղացիութեան որևէ դրական արդիւնք արտադրեն։

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Ռէվէլ, 28 սեպտեմբերի

Ի յաւերժացումն Էստլանդիան միացնելու երկհարիւրամեակին, բօրսային կոմիտէը որոշեց վաղը աշխատանքները դադարեցնել տալ գործարաններում և ֆաբրիկաներում։ Պետրոս Մեծի արձանի կառուցման կոմիտէը 100,000 օրինակ Էստլանդիայի միացման պատմութիւնից բաժանեց ազգաբնակութեանը։ Քաղաքը կազմում է ժողովրդական զուարճութիւններ։

Եկաւ Մեծ իշխան Կոնստանտինովիչը։

Առ. ժամը 8-ին բոլոր եկեղեցիներում կատարվեցին հոգեհանգիստներ Պետրոս Մեծի յիշատակին։ Ժամը 4-ին բոլոր կրթական հաստատութիւններում տեղեկութիւններ տրվեցին յօբելեանական հանդէսների մասին։ Ժամը 5-ին տեղի ունեցաւ լանդտագի և քաղաքային դումայի հանդիսաւոր նիստը։ Դուման որոշեց, որ այն հրապարակը և ծառաստանը, ուր դրված է արձանը, անուանել Պետրոսի անունով։ Ժամը 2-ին հրապարակի վրա շարքերով, Պետրոս Մեծի տնակի առաջ, կանգնեցին զօրքերը, նաւաստիները և պատգամաւորները. եկաւ Մեծ Իշխանը։ Արքեպիսկոպոսը հոգեհանգիստ կատարեց։ Թնդանօթները պարզվեցին, որից յետոյ Մեծ Իշխանը անցաւ զօրքերի և աշակերտութեան միջով և բարևեց։ (Հ. Գ.)

—

Պետերբուրգ, 28 սեպտեմբերի

Կապիտան Մացիէվիչի հոգեհանգիստին ծովակալութեան տաճարում ներկայ էին զինուորական մինիստրը, ծովային մինիստրութեան կառավարիչը, Դումայի անդամներից շատերը նախկին նախագահի հետ, բոլոր զօրամասերի, նաւատորմի, բոլոր բարձրագոյն զինուորական դպրոցների պատգամաւորները, աէրօպլանների և օդային նաւատորմ կառուցանելու կոմիտէի անդամները, Միացեալ-Նահանգների զինուորական մինիստրը իր շքախմբով։ Դագաղը դուրս բերին զինուորական և ծովային մինիստրները, Մեծ Իշխան Ալէքսանդր Միխայլովիչի ադիւտանտները, Գուչկովը, հանգուցեալի ընկերները, օդաչուները, նաւաշէն ինժենէրները և գրին դիակառքի վրա, որի ետևից բերում էին տասն ուրիշ դիակառքեր պսակներով լի։ Սգերթին, որ շրջապատված էր աշակերտ-աշակերտուհիների խմբերով, հետևում էր երկու վաշտ՝ երաժշտութեամբ։ Բազմամարդ ամբոխները լցրել էին մայթերը։ Հէնց որ սգերթը մօտեցաւ Ալէքսանդրեան վանքին, նրա վրա երևաց զինուորական «Կրեչէտ» դիրիժաբլը, որ մի քանի պտոյտներ գործելուց յետոյ վերադարձաւ իր տեղը։ Դագաղը զինուորական պատիւներով յանձնվեց հողին։ (Հ. Գ.)

—

Քութայիս, 28 սեպտեմբերի

Դիմնազիստ Կոմարովի յափշտակողներին հիւրանոցում ձերբակալելու ժամանակ սպանվեց ժաղարական բոմբիստ Դվուժինին, մահացու վիրաւորվեց մի ոստէր-օֆիցէր։ Յանցաւորներից մինը սպանվեց, միւսը փախաւ։ Կասկածով կալանաւորվեցին երկու հոգի։

Զարգարդծները ճանաչվեցին նրանից, երբ նրանք մի հարիւրանոց էին ուղարկել պետական գանձարանը մանրելու համար, իսկ գանձապահը գիտէր դիմնազիստ Կոմարովի ծնողներից յափշտակած 6,000 ռուբլու հարիւրանոցների համարները։ (Հ. Գ.)

—

Վլադիկավկազ, 28 սեպտեմբերի

Սեպտ. 20-ի յարձակման պատճառով նահանգապետը առաջարկեց ինգուշների գիւղերի ներկայացուցիչներին՝ յանձնել երկու շաբաթվայ մէջ Զէլիմ-խանին իր խմբով։ Տանուտէրերը զրկվեցին զէնք կրելու իրաւունքից և իրանց կոչումից։ (Հ. Գ.)

—

Տուլան, 28 սեպտեմբերի

Վաղը ռուսաց էսկադրան Մանկօվսկիի հրամանատարութեամբ կը մտնէ Վիգօ։ (Հ. Գ.)

—

Վլադիվոստոկ, 28 սեպտեմբերի

Սենատոր Գլիշչինսկին մեկնեց Պետերբուրգ։ Խաբարովսկից Վլադիվոստոկ մտնելու ժամանակ այն վագոնում, ուր պահվում էին փաստաթղթերը և բէվիզիայի գործերը, հրդեհ ծագեց։ Գործերը ազատեցին։ (Հ. Գ.)

Եկատերինոդար, 28 սեպտեմբերի

Սօչիի հանրապետութեան գործի առիթով զինուորական դատարանը բոլոր հինգ մեղադրեալներին դատապարտեց մահվան պատժի։ (Հ. Գ.)

—

Պետերբուրգ, 28 սեպտեմբերի

Լրագրական տեղեկութիւնները մինիստրների խորհրդի նախագահի Ֆրիդբէրգ գնալու մասին անհիմն են։

(Հ. Գ.)

—

Բերլին, 28 սեպտեմբերի

Համալսարանում յօբելեանական հանդիսին ներկայ էին թագաւորական զոյգը, գահաժառանգը, պրինցները և պրինցուհիները, բարձր պաշտօնեաները, պարլամենտի նախագահները, արտասահմանեան համալսարանների ռեկտորները, բազմաթիւ պատուաւոր հիւրեր։

Համալսարանի ռեկտորը ողջոյնի ճառի մէջ, ընդգծելով համալսարանական գիտութեան վերջին տարում ունեցած հզօր զարգացման պատկերը, մատնանշեց այն բարձր նպատակների վրա, որ ժամանակը առաջադրում է համալսարաններին։

Յետոյ Վիլհելմ կայսրը բարձրանալով ամբիոն, մատնանշեց Բերլինի համալսարանի միջազգային նշանակութեան վրա և ընդգծեց այն իրողութիւնը, թէ անհրաժեշտ է ճեմարանների և համալսարանների հետ միասին ստեղծել առանձին ինքնուրոյն գիտական ինստիտուտներ, որոնք զբաղվէին բնագիտական առարկաներով. այդօրինակ կազմակերպութիւնների հաստատումը կայսրին ներկայանում է այժմեան օրերի սրբազան նպատակ. մասնաւոր նուիրատուութիւններից մինչև օրս այդ նպատակով տասն միլիոն կայ կայսրի տրամադրութեան տակ. այժմ կայսրը ցանկանում է իր հովանաւորութեան ներքոյ հաստատել իր անունն ընկերութիւն այդ տեսակ ինստիտուտներ հիմնելու և պահպանելու համար. կայսրը կարծում է, որ պետութիւնը կաջակցէ այդ ձեռնարկութեանը։

Կայսրի ճառից յետոյ ժողովը բացագանչեց «հօխ» և երգեց հիմն։

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրը Բերլինին յանձնեց նորերս կառուցված թագաւորական գրադարանը։ Բերլինը նուիրեց 200,000 մարկ թոշակների և գիտական ճանապարհորդների համար։ Արտասահմանեան համալսարանների ներկայացուցիչները շնորհաւորեցին։ Սլաւօնական համալսարանների կողմից խօսեց Պետերբուրգի համալսարանի ռեկտորը։ (Հ. Գ.)

—

Վիէննա, 28 սեպտեմբերի

«Նէյէ-Ֆրէյէ-Պրեսսէն» իշխան Ուրուսօվին տրված հրավարտակի մէջ տեսնում է կայսրի ցանկութիւնը՝ պահպանել և ամրապնդել բարեկամական յարաբերութիւններ Աւստրօ-Ունգարիայի հետ։ Այդ կացութիւնը, լրագրի ասելով, բաժանում է նաև Աւստրօ-Ունգարիան։ (Հ. Գ.)

—

Պարիզ, 28 սեպտեմբերի

Երկաթուղային գործադուլի պատճառով պօստային ծառայութիւնը կատարվելու է աւտօմօբիլներով։ Երեկոյեան ժամը 5½-ին երկաթուղային տոմսակներ տալը դադարեց։

Բրիանը և Միլիէրանը յայտնեցին մինիստրների խորհրդում, որ գործադուլը հելսիսյան երկաթուղիների վրա բռնկվեց անսպասելի կերպով։ Գործադուլը ընդունում է աւելի շուտ քաղաքական, յեղափոխական, քան պրոֆէսիոնալ բնաւորութիւն։ Երկաթուղային ծառայողների մեծ մասը դեմ է գործադուլին։ Զինուորական միջոցներ արդէն ձեռք առնված են և կուժեղացվեն՝ աշխատանքի լիակատար ազատութիւնը ապահովելու համար։ Յանցագործները յանձնվում են դատարանին։ Միջոցներ են ձեռք առնված ապահովելու Պարիզը ուտելեղէններով։ Կամուրջները Պարիզի շրջակայքում գրաւված են զօրքերով։ (Հ. Գ.)

—

Համբուրգ, 28 սեպտեմբերի

Նաւատէրերի և բանուորների միջև ծագեցին նոր թիւրիմացութիւններ։

Այսօր բանուորները աշխատանքի չեկան։ (Հ. Գ.)

—

Բրեմէն, 28 սեպտեմբերի

Բրեմէնում նաւահանգստային բանուորների գործադուլի հետ տեղիս բանուորները որոշեցին գործադուլ անել։

(Հ. Գ.)

—

Նիւ-Եօրկ, 28 սեպտեմբերի

Անտառային հրդեհները Ուօրէնում (Մինեսէզոտա) պատճառեցին մի քանի միլիոնի վնաս։ Զոհվեցին 4,000 մարդ։

(Հ. Գ.)

—

Բուքայիսից «Kab.» լրագրին հեռագրում են. «Սեպտեմբերի 28-ին, առ. ժամը 10-ին երբ փորձ եղաւ ձերբակալել «Сѣверные номера» հիւրանոցում երկու տղամարդու և մի կնոջ, որոնք գերել էին գիմնազիստ Կամարօվին, սպանվեց ժանդարմական ըստ միտոր Դվուժէրնին, մի ժանդարմ վիրաւորվեց մահացու կերպով։ Ոճրագործները իրանց նետեցին պատուհանից դուրս՝ կրակելով շարունակ։ Նրանցից մինը սպանվեց, միւսը բռնվեց։ Սպանվածի գրպանում գտնվեց 6,000 ռուբլի»։

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ ՊՕՐՏՈՒԳԱԼԻԱՅՈՒՄ

—

Լիսաբոն, 28 սեպտեմբերի

Նոր կառավարութեան պաշտօնական օրգանը հրատարակեց պօրտուգալական հին օրէնքի վրա հիմնված մի հրավարտակ, որով եղուիտները արտաքսվում են, բոլոր նրանց հաստատութիւնները վերացվում են, գոյքը յարքունիս է գրաւվում։ Կրօնական ընկերութիւնների ստացուածքը կը կնքվի և կը դնահատվի։ Վերջում՝ պետութեան և եկեղեցու փոխադարձ հաժանձայնութեամբ այդ ստացուածքից կը տրվի վարձատրութիւն։

Մի քանի եկեղեցիներ բացվեցին։ Նրանց վրա ծածանում են արտասահմանեան դրօշակներ։ Պապի նուիրակը բարձրացրեց աւստրիական դրօշակ։

Տախօյում խարիսխ գցած երեք նաւերը գտնվում են զինուորական պաշտպանութեան ներքոյ։ Նրանց մօտենալ արգելված է։ (Հ. Գ.)

—

Հռոմ, 28 սեպտեմբերի

Իտալիան միջոցներ է ձեռք առնում արգելելու Պօրտուգալիայից արտաքսվածների մուտքը Իտալիա։ (Հ. Գ.)

—

Պետերբուրգ.—Արտաքին գործերի մինիստրութեան կառավարիչ Սազօնով ստացաւ պօրտուգալական ժամանակաւոր կառավարութիւնից հեռագիր հետևեալ բովանդակութեամբ. «Ժողովուրդը և զօրքը խորտակեցին միապետական հիմնարկութիւնները և հրատարակեցին հանրապետութիւն, որը ժողովրդի վաղուցվայ ցանկութիւնների արտայայտութիւնն է։ Ոգևորութիւնը անկարագրելի է։ Ընդհանուր կարգը կատարելապէս ապահովված է կառավարութեան գործողութիւններով և քաղաքացիների համերաշխութեամբ»։ Ապա հեռագրի մէջ բերված է ժամանակաւոր կառավարութեան անդամների ցուցակը։

Ռուսական գործերի հաւատարմատարը Լիսաբոնում՝ հեռագրում է արտաքին գործերի մինիստրին. «Սեպտեմբերի 21-ին, առաւօտեան, սկսվեց ապստամբական շարժումը։ Արքայական զօրքի մեծ մասը անձնատուր եղաւ։ Արքայական ընտանիքը առայժմ անվտանգ է»։

Լօնդոնի ռուսական դեսպանութիւնից արտաքին գործերի մինիստրութեան կառավարիչ Սազօնով հետևեալ հեռագիրը ստացաւ. «Անգլիական կառավարութիւնը հրամանագրեց անգլիական մերձակայ կրէյսերներին գնալ Լիսաբոն և փրկել արքայական ընտանիքը։ Ապա աւելի ուշ ստացված հեռագիրը լուր են հաղորդում, որ Թագաւորին աջողվել է ազատվել, գնալով ծովը իր սեփական զբօսանաւով։

Պետերբուրգի դիպլոմատիական շրջաններում մինչև վերջին ժամը ոչինչ տեղեկութիւններ չը կային Թագաւորի վիճակի մասին։

—

Պետերբուրգ.—Հէնց նոր հրատարակված պօրտուգալական հանրապետութեան ժամանակաւոր կառավարութեան գլուխը, Տէօֆիլ Բրագա, Մ. Մ. Կովալէվսկիի խօսքով, իր ժամանակ պօրտուգալական պօզիտիվ փիլիսօփայութեան ամենագրի խմբագիր-հրատարակիչն էր և որպէս գլուխ պօրտուգալական պօզիտիվիստների՝ յարաբերութիւններ ունէր Մ. Կովալէվսկիի հետ, երբ վերջինս Մոսկվայում հրատարակում էր «Критическое Обозрѣніе»։ Տէօֆիլ Բրագա այն ժամանակից շարունակում էր հետաքրքրվել պօզիտիվիզմով և մինչև այժմ ևս Պարիզի սոցիոլոգիական միջազգային ինստիտուտի անդամ է։ Այդ ինստիտուտի հանձնաժողովներում միշտ ներկայ էր լինում հանգուցեալ Կարաբէս դէ-Մէդէյրոսը, որը ի միջի այլոց հրաժարվեց արդարադատութեան մինիստրի նրան առաջարկված պօրտֆէյլից, որովհետև չէր ընդունում կաբինէտի մեռցած անդամների հայտագրները։ Մէդէյրոսը շատ մօտ յարաբերութիւններ ունէր Տէօֆիլ Բրագայի հետ և միշտ ասում էր նրա մասին, որ նա ամենասընթաց և յարգելի անձնաւորութիւններից մէկն է Պօրտուգալիայում։ Կիէվի համալսարանի հանգուցեալ պրոֆէսօր Անտոնովիչ նոյնպէս ծանօթացաւ Տէօֆիլ Բրագայի հետ էանօգրաֆների և անտրոպօլօգների համաժողովում Լիսաբոնում և նոյնպէս նրա մասին ասում էր, որ նա Պօրտուգալիայի ամենալուրջ և աչքի ընկնող մարդկանցից մէկն է։

Տէօֆիլ Բրագան արդէն հասակով մարդ է. նա 60 տարեկանից անց է։ Նա ամենևին ծայրայեղ հասարակութիւնների տէր մարդ չէ։ Նրա իդէալն է՝ հաշտեցնել կարգը ազատութեան հետ։ Տէօֆիլ Բրագային անուանում են պետագէտ, պատմութեան պրոֆէսօր, բայց այդպէս չէ։ Պօրտուգալիայի ժամանակաւոր կառավարութեան այժմեան գլուխը զբաղվում էր համեմատական ազգագրութեամբ և ֆոլկլօրով։ Մ. Մ. Կովալէվսկին։ Ցոյս կայ, որ այսօր կամ վաղը դուրս կելնէ։ Հիւանդութեան առիթ տուած են Զէյթունէ հասած լուրերը, որոցմով չափազանց յուզուեր է և նոյն իրիկունը տուն դարձին՝ անկողին ինկած է զառանցագին արտասանելով՝ «անզգաստեր, անիրաւներ»։

Դուրեան պատրիարքի բնաւորութեան մէկ որոշ գիծն է լսել, զգալ, յուզուիլ, բայց չարտայայտել։ Այդպէս եղած է Զէյթունի լուրերուն հասած ատեն։

Առաջնորդական փոխանորդը, Վաղարշակ վարդապետ, որու մասին քանիցս գրուած է սակէ առաջ, տեղեկագրելով թէ Մարաշի կառավարութիւնը սկսած է նոր պահանջումներ ընել եօթը փախստական զէյթունցիներու համար, որոնք, ընդհանուր ներումի առիթով, քաղաք եկած են, կը բողոքէ այդ անիրաւ վարմունքի դէմ և յայտարարած է հրաժարիլ։

Ինչպէս կը տեսնուի, իրողութիւնը շատ տարօրինակ է, և բնականաբար առաջ բերած յուզումն ալ պիտի ըլլար նոյն հատիժատութեամբ։ Զէյթունն, նոյն առիթով, չափէ դուրս վրդովված է։ Չէ կարելի ըմբռնել, թէ ինչպէս յանկարծ ծնունդ կառնեն այսպիսի իրողութիւններ, շատ յայտնի անիրաւութիւններ, և, մէկ լսպէէն միւսը, երևան կուգան այնպիսի ժամանումներ, որոնք կը յիշեցնեն Համիդի ընդհանուր ժամանումի շրջանը։ Տարակոյս չունինք թէ պատրիարքարանի կողմէ եղած դիմումները իսկոյն նկատի կառնուին և պէտք եղած հրահանգները կը գործադրուին, բայց մինչև ատ՝ կուսակալութեան մէջ վրդով, վրդով Զէյթունի մէջ ու շրջակաները, վրդով տեղական խառն բնակչութեան մէջ, և իսկոյն մթին ամպերը ծայր կուտան խաղաղ երկնքի վրայ։

Այդ կարգի մտածումներու մէկ ուրիշ տեսակը եղաւ Մուշի մէջ արեւնի փոխարեն հարց մը, որ տեղական միւֆթին սկզբատ ընդունած է, և, իր բրած դիմումին վրայ ալ շէյխ-իւլ իսլամ էֆէնդին, շէրիի տրամադրութեանցը համաձայն, հարցը ընդգրկած։ Այսինքն իսլամ կարգ մը գիւղացիներ, Համիդի օրով, հայ գիւղերու վրայ յարձակում գործած ատեն՝ կորուստ տուած են տեղացիներու դիմադրութեան առջև։ Այժմ, այդ թիւերը արձանագրուած, փոխարինութիւն կը պահանջուի հայ գիւղացիներէն, առանց նկատի առնելու որ այդ կարգի դէպքերը, իբրև բռնապետական շրջանի արարքներ, սահմանադրութեան հուչակումով, սրբուած են իրողութեանց շարքէն։

Հետաքրքրական է գիտնալ, թէ մահմեդական միւֆթին, այդ հարցը ընդգրկած ատեն, չխորհեցաւ մի՞թէ որ հայերու պահանջը, այդ մասին, ոչ թէ քանի մը տասնեակ թիւերու, այլ քսի մը հարիւր հազարներու կը յանգի։ Ի՞նչ պիտի ընեն իրենք, մահմեդականները, եթէ իրենց այդ պահանջումովը դուռ բացած ըլլան հայերու պահանջին։ Ոչ, շատ պարզ է շէրիի օրէնքով։ Իսլամական դատարանի առջև երկու իսլամի վկայութիւնը կը բաւէ թէ ժխտական և թէ հաստատական տեսակէտով։ Եւ դժուարութիւն չէ ճարել միշտ երկու սուտ վկաներ՝ հաստատելու իսլամի մը դատը, չէզոքացնելու քանի մը տասնեակ քրիստոնեաներու փաստացի վկայութիւնները։

Այդ առթիւ, Գ. Զօհրապ և Մուշի պատգամաւոր Գիւղամ Տէր-Կարապետեան, դիմում ընելով շէյխ-էլ իսլամի դուռը, նկատողութիւն ներկայացուցած են։ Ցոյս կայ, որ կրօնապետ էֆէնդին խելք կունենայ հարցին անտեղութիւնը ըմբռնել և, ձեռքը շէրիի վրայ, նոր հակասութեանց նոր միջոցներ չստեղծել։

Դաւառներու մէջ նոր զինուորագրութիւնը կը շարունակուի. Փոքր-Ասիոյ հայերը մեծ ոգևորութեամբ կընդունեն հրաւէրը։ Դժբաղդութիւն մը սա եղաւ, որ մեր պատրիարքարանը տիրացուներու սին, դատարկ հարցով մը՝ առիթ տուաւ որ տեղ-տեղ թեթև կերպով, Պօլսի մէջ ամեն միջոցներով, շատ երիտասարդներ խոյս տան զինուորականութենէ։ Քանիցս մերժուեցաւ այդ հարցը դատական և զինուորական մինիստրներէն ու քանիցս ալ, նոր առարկութիւններով, հարցը կրկնուեցաւ իբրև շատ կարևոր ինչ։

Կառավարութիւնը, վերջէն առնուած պատասխաններու մէջ, կընդունի որ վարդապետ, քահանայ, սարկաւագ ազատ նկատուին։ Առաջին երկուքին համար՝ շատ պարզ էր արդէն կառավարութեան տեսակէտը, կը մնար միայն «սարկաւագը», պետական բառով ծխմաս, քահանային օժանդակը ժամերգութեանց ատեն, ինչպէս է ատենց դերը ժղովներու մէջ գլխաւոր հօրջներու հետ։ Այդ վերջին բացատրութիւնով՝ ջանք կայ այժմ փաստաբանելու, թէ «տիրացուներն» են քահանային օժանդակները։ Ու ատով միջոց պիտի տրուի, որ «տիրացուներու» մեծ թիւ մը ունենանք ամեն տարի, ու ամեն տեղ գուցէ, որովհետև տրուած օրինակը կրնայ տարափոխիկ ըլլալ։

Թերզեան պատրիարք իր քանի մը ժողովականներու հետ անհամաձայնութիւններ ունեցած է։ Ընդհանուր ժողովի կողմէ բացատրութիւն առնուած է և հարկ տեսնուած, որ պատրիարքը, պապին այցելելէ ետքը, դարձին ընէ ինչ որ պէտք է։

Մեռելներու հարց մը կը զբաղեցնէ Կումկափուի ու Սակըզ-Աղաջի պատրիարքարանները։ Մենք ունինք ընդարձակ գերեզմանոց մը, Պերայի ամենէն լաւ դիրքի մը վրայ։ Կառավարութիւնը քանիցս ուղած է ձեռք անցնել տեղը։ Աշրգեան պատրիարքի օրով հարցը շատ արծարծուեցաւ։ Յովհաննէս Նուրեան, այն ատեն վարչութեան ատենապետ և միանգամայն իբրև պետական մեծ պաշտօնատար, ջանքեր ըրաւ, դրամական փոխարինութիւնով, գերեզմանոցը ծախել կառավարութեան։

Եկեղեցական ընդհանուր ժողով մը—որու գործակից գտնուած են Խրիսեան Հայրիկ, արդի Վեհափառ Կաթողիկոսը՝ Իգնատիանն Մատթէոս—ուժգնապէս դիմադրուած է, որով ջուրը ինկած էր սուլթան Համիդի պահանջումը և Նուբարի ծրագիրը։ Խորէն Աշրգեան ինքն ալ, անշուշտ, կարեկից գտնուած է «չտալու» քաղաքականութեանը։ Ու այդպէս, գերեզմանոցը կրցած է մնալ դարձեալ ազգին սեփականութիւնը։ Եթէ արժէք մը ուզենք դնել, այսօր 1,000,000 ռուբլիէն թերևս աւելի գին ունի։

Եւ որովհետև,—կըսեն,—այդ գերեզմանոցին՝ մէջ հայ-կաթոլիկները, մայր-եկեղեցին զատուելէ առաջ, ունեցած ըլլալու են իրենց այն սեռելները, որոնց յաջորդները պապական հայեր են, այսօր մասամբ իրենք ալ տէրն են այդ գերեզմանոցին։ «Շատ լաւ,—կըսուի իրենց.—այդ գերեզմանոցին մէջ թաղուելու իրաւունք կար այն ատեն, երբ պապականութիւնը տարած չէր ձեզ ալ մայր-եկեղեցիէն, որմէ անջատուելէ ետքը՝ ունեցաք ձեր մեռելներուն համար ուրոյն գերեզմանոց, ինքնին հրաժարած ըլլալով այն իրաւունքներէն, որոնց տէր էին հին մեռելները։ Արդ, երբէսքի տիրանաք ձեր նախնիքներու իրաւունքին, ձեր պապերու իրաւունքին՝ գէրեզմաններու և եկեղեցիներու մէջ, դարձէք անոնց նախկին տեղերը, այսինքն՝ ձեր մայր-եկեղեցին»։

Ու ի՞նչ լաւ կըլլայ այն ատեն. բոլոր իրաւունքները կը դառնան իրենց տէրերուն, և ազգն ալ, Հռոմի ու էջմիածնի անունով, բոլորովին ազատուած կըլլայ դատարկ վէճերէ, մեռելական իրաւունքներէ, որոնք ատեն-ատեն,—ճիշդ՝ երբ ազգին հատուածներուն մէջ համագործակցութեան, նոր սիրելութեան հաւանականութիւններ մէջտեղ կելլեն,—կուգան սառ ջուրի հոսանքներ լցնել սիրտերու մէջ։

Ինծի այնպէս կը թուի, թէ վարպետ խաղ մըն է առ. ճիզուիթական հին խաղերու պէս։ Այդ հարցը քանիցս արծարծուած է Ազարեան պատրիարքի օրով. սեփականութեանց օրէնքը շատ յայտնի ըլլալով՝ դրական արդիւնք չէր կրնար առաջ գալ, և ինչպէս որ եկած չէ արդէն։ Հետևանքը սա կըլլայ, որ հին ցասութիւնները կը նորոգուին, և մերձեցումները կամ հաւանականութիւնները կը ցնդին երազներու պէս։ Իսկապէս խաղ է առ, ու անտարակոյս օտար մեքենայութիւններէ ծնունդ, մոլեռանդութեան և գուցէ ոսանց շահերու երեսէն արծարծուած։

Շահէն

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Բօսանօվսկի, 22 սեպտեմբերի

Ամսիս 8-ին Արմաւիր աւանում Յարութիւն Յարութիւնեանը, լսելով Բօսանօվսկիում երկդասեան երկսեռ դպրոց ունենալու կարիքը, դրականապէս վճռեց 1911 թ. կառուցանել վերոյիշեալ հայ գաղթավայրում աղիսաշէն երկդասեան դպրոց։

Արձանագրելով Յ. Յարութիւնեանի այս բարի որոշումը, հարկ եմ համարում շեշտել, որ Բօսանօվսկիում հայոց դպրոցը անպայման մի փրկարար միջոց կը հանդիսանայ Կուբանի շրջանի գաղթական հայ մատաղ սերնդի համար։

Յարութիւնեանը կտակով թողել է 15,000 ռուբլի Հէնց-Նախիջևանի գիւղերից մէկում բանալու դպրոց։ Կուլտուրական այս գործի շարժառիթը, որքան ինձ յայտնի եղաւ, երդ.-հաւատարմատար Ջ. Բալուղեանն է։

Ն. ք. Հերթեցեան

—

Բուքայիս, 26 սեպտեմբերի

Սեպտ. 17-ին վերատուգող յանձնաժողովը նորից ձեռնակեց հոգաբարձութեան գործերի քննութեան։ Քննութիւնը սկսվեց երեկոյեան ժամը 8-ին և վերջացաւ գիշերվայ ժամը 1-ին։ Ներկայ էին հոգաբարձուներից 3 հոգի։ Այս անգամ վերատուգող յանձնաժողովը միաձայն որոշեց ընդհ. ժողովին խնդրել՝ շնորհակալութիւն յայտնել հոգաբարձութեան իր անբիծ և բեղմնաւոր գործունէութեան համար։ Այդ մասով կազմվեց արձանագրութիւն և ստորագրվեց վերատես. յանձնաժողովի բոլոր 5 անդամներից։

Սեպտ. 25-ին կայացաւ ծխ. ժողով, որին նախագահում էր Գ. Թօջյեան։ Գործակալ Գ. ք. Սօլաղեան կարդաց թեմ. առաջնորդի պաշտօնական հրամանագիրը, որով առաջարկվում է կատարել նոր հոգաբարձուների ընտրութիւն։ Ապա կարդաց և կօնսիստորիայից ստացված պաշտօնական գրութիւնը եկեղեցու համար նոր երեցփոխ ընտրելու մասին։ Կարդացվեց վերատես. յանձնաժողովի զեկուցումը հոգաբարձութեան գործունէութեան մասին, որ ժողովականներից ընդունվեց մեծ հաճութեամբ։ Բայց որովհետև երեցփոխի հաշիւները ամբողջութեամբ չէին քննվել յանձնաժողովից, ուստի և նրա մասին զեկուցում չէր կազմվել։

Օրմանեան, 28 սեպտեմբերի

Ամիս մը առաջ, տեղեկագրելով թէ Մարաշի կառավարութիւնը սկսած է նոր պահանջումներ ընել եօթը փախստական զէյթունցիներու համար, որոնք, ընդհանուր ներումի առիթով, քաղաք եկած են, կը բողոքէ այդ անիրաւ վարմունքի դէմ և յայտարարած է հրաժարիլ։

Ինչպէս կը տեսնուի, իրողութիւնը շատ տարօրինակ է, և բնականաբար առաջ բերած յուզումն ալ պիտի ըլլար նոյն հատիժատութեամբ։ Զէյթունն, նոյն առիթով, չափէ դուրս վրդովված է։ Չէ կարելի ըմբռնել, թէ ինչպէս յանկարծ ծնունդ կառնեն այսպիսի իրողութիւններ, շատ յայտնի անիրաւութիւններ, և, մէկ լսպէէն միւսը, երևան կուգան այնպիսի ժամանումներ, որոնք կը յիշեցնեն Համիդի ընդհանուր ժամանումի շրջանը։ Տարակոյս չունինք թէ պատրիարքարանի կողմէ եղած դիմումները իսկոյն նկատի կառնուին և պէտք եղած հրահանգները կը գործադրուին, բայց մինչև ատ՝ կուսակալութեան մէջ վրդով, վրդով Զէյթունի մէջ ու շրջակաները, վրդով տեղական խառն բնակչութեան մէջ, և իսկոյն մթին ամպերը ծայր կուտան խաղաղ երկնքի վրայ։

Այդ կարգի մտածումներու մէկ ուրիշ տեսակը եղաւ Մուշի մէջ արեւնի փոխարեն հարց մը, որ տեղական միւֆթին սկզբատ ընդունած է, և, իր բրած դիմումին վրայ ալ, շէյխ-իւլ իսլամ էֆէնդին, շէրիի տրամադրութեանցը համաձայն, հարցը ընդգրկած։ Այսինքն իսլամ կարգ մը գիւղացիներ, Համիդի օրով, հայ գիւղերու վրայ յարձակում գործած ատեն՝ կորուստ տուած են տեղացիներու դիմադրութեան առջև։ Այժմ, այդ թիւերը արձանագրուած, փոխարինութիւն կը պահանջուի հայ գիւղացիներէն, առանց նկատի առնելու որ այդ կարգի դէպքերը, իբրև բռնապետական շրջանի արարքներ, սահմանադրութեան հուչակումով, սրբուած են իրողութեանց շարքէն։

Հետաքրքրական է գիտնալ, թէ մահմեդական միւֆթին, այդ հարցը ընդգրկած ատեն, չխորհեցաւ մի՞թէ որ հայերու պահանջը, այդ մասին, ոչ թէ քանի մը տասնեակ թիւերու, այլ քսի մը հարիւր հազարներու կը յանգի։ Ի՞նչ պիտի ընեն իրենք, մահմեդականները, եթէ իրենց այդ պահանջումովը դուռ բացած ըլլան հայերու պահանջին։ Ոչ, շատ պարզ է շէրիի օրէնքով։ Իսլամական դատարանի առջև երկու իսլամի վկայութիւնը կը բաւէ թէ ժխտական և թէ հաստատական տեսակէտով։ Եւ դժուարութիւն չէ ճարել միշտ երկու սուտ վկաներ՝ հաստատելու իսլամի մը դատը, չէզոքացնելու քանի մը տասնեակ քրիստոնեաներու փաստացի վկայութիւնները։

Այդ առթիւ, Գ. Զօհրապ և Մուշի պատգամաւոր Գիւղամ Տէր-Կարապետեան, դիմում ընելով շէյխ-էլ իսլամի դուռը, նկատողութիւն ներկայացուցած են։ Ցոյս կայ, որ կրօնապետ էֆէնդին խելք կունենայ հարցին անտեղութիւնը ըմբռնել և, ձեռքը շէրիի վրայ, նոր հակասութեանց նոր միջոցներ չստեղծել։

Դաւառներու մէջ նոր զինուորագրութիւնը կը շարունակուի. Փոքր-Ասիոյ հայերը մեծ ոգևորութեամբ կընդունեն հրաւէրը։ Դժբաղդութիւն մը սա եղաւ, որ մեր պատրիարքարանը տիրացուներու սին, դատարկ հարցով մը՝ առիթ տուաւ որ տեղ-տեղ թեթև կերպով, Պօլսի մէջ ամեն միջոցներով, շատ երիտասարդներ խոյս տան զինուորականութենէ։ Քանիցս մերժուեցաւ այդ հարցը դատական և զինուորական մինիստրներէն ու քանիցս ալ, նոր առարկութիւններով, հարցը կրկնուեցաւ իբրև շատ կարևոր ինչ։

Կառավարութիւնը, վերջէն առնուած պատասխաններու մէջ, կընդունի որ վարդապետ, քահանայ, սարկաւագ ազատ նկատուին։ Առաջին երկուքին համար՝ շատ պարզ էր արդէն կառավարութեան տեսակէտը, կը մնար միայն «սարկաւագը», պետական բառով ծխմաս, քահանային օժանդակը ժամերգութեանց ատեն, ինչպէս է ատենց դերը ժղովներու մէջ գլխաւոր հօրջներու հետ։ Այդ վերջին բացատրութիւնով՝ ջանք կայ այժմ փաստաբանելու, թէ «տիրացուներն» են քահանային օժանդակները։ Ու ատով միջոց պիտի տրուի, որ «տիրացուներու» մեծ թիւ մը ունենանք ամեն տարի, ու ամեն տեղ գուցէ, որովհետև տրուած օրինակը կրնայ տարափոխիկ ըլլալ։

Թերզեան պատրիարք իր քանի մը ժողովականներու հետ անհամաձայնութիւններ ունեցած է։ Ընդհանուր ժողովի կողմէ բացատրութիւն առնուած է և հարկ տեսնուած, որ պատրիարքը, պապին այցելելէ ետքը, դարձին ընէ ինչ որ պէտք է։

Մեռելներու հարց մը կը զբաղեցնէ Կումկափուի ու Սակըզ-Աղաջի պատրիարքարանները։ Մենք ունինք ընդարձակ գերեզմանոց մը, Պերայի ամենէն լաւ դիրքի մը վրայ։ Կառավարութիւնը քանիցս ուզած է ձեռք անցնել տեղը։ Աշրգեան պատրիարքի օրով հարցը շատ արծարծուեցաւ։ Յովհաննէս Նուրեան, այն ատեն վարչութեան ատենապետ և միանգամայն իբրև պետական մեծ պաշտօնատար, ջանքեր ըրաւ, դրամական փոխարինութիւնով, գերեզմանոցը ծախել կառավարութեան։

Եկեղեցական ընդհանուր ժողով մը—որու գործակից գտնուած են Խրիսեան Հայրիկ, արդի Վեհափառ Կաթողիկոսը՝ Իգնատիանն Մատթէոս—ուժգնապէս դիմադրուած է, որով ջուրը ինկած էր սուլթան Համիդի պահանջումը և Նուբարի ծրագիրը։ Խորէն Աշրգեան ինքն ալ, անշուշտ, կարեկից գտնուած է «չտալու» քաղաքականութեանը։ Ու այդպէս, գերեզմանոցը կրցած է մնալ դարձեալ ազգին սեփականութիւնը։ Եթէ արժէք մը ուզենք դնել, այսօր 1,000,000 ռուբլիէն թերևս աւելի գին ունի։

Եւ որովհետև,—կըսեն,—այդ գերեզմանոցին՝ մէջ հայ-կաթոլիկները, մայր-եկեղեցին զատուելէ առաջ, ունեցած ըլլալու են իրենց այն սեռելները, որոնց յաջորդները պապական հայեր են, այսօր մասամբ իրենք ալ տէրն են այդ գերեզմանոցին։ «Շատ լաւ,—կըսուի իրենց.—այդ գերեզմանոցին մէջ թաղուելու իրաւունք կար այն ատեն, երբ պապականութիւնը տարած չէր ձեզ ալ մայր-եկեղեցիէն, որմէ անջատուելէ ետքը՝ ունեցաք ձեր մեռելներուն համար ուրոյն գերեզմանոց, ինքնին հրաժարած ըլլալով այն իրաւունքներէն, որոնց տէր էին հին մեռելները։ Արդ, երբէսքի տիրանաք ձեր նախնիքներու իրաւունքին, ձեր պապերու իրաւունքին՝ գէրեզմաններու և եկեղեցիներու մէջ, դարձէք անոնց նախկին տեղերը, այսինքն՝ ձեր մայր-եկեղեցին»։

Ու ի՞նչ լաւ կըլլայ այն ատեն. բոլոր իրաւունքները կը դառնան իրենց տէրերուն, և ազգն ալ, Հռոմի ու էջմիածնի անունով, բոլորովին ազատուած կըլլայ դատարկ վէճերէ, մեռելական իրաւունքներէ, որոնք ատեն-ատեն,—ճիշդ՝ երբ ազգին հատուածներուն մէջ համագործակցութեան, նոր սիրելութեան հաւանականութիւններ մէջտեղ կելլեն,—կուգան սառ ջուրի հոսանքներ լցնել սիրտերու մէջ։

Ինծի այնպէս կը թուի, թէ վարպետ խաղ մըն է առ. ճիզուիթական հին խաղերու պէս։ Այդ հարցը քանիցս արծարծուած է Ազարեան պատրիարքի օրով. սեփականութեանց օրէնքը շատ յայտնի ըլլալով՝ դրական արդիւնք չէր կրնար առաջ գալ, և ինչպէս որ եկած չէ արդէն։ Հետևանքը սա կըլլայ, որ հին ցասութիւնները կը նորոգուին, և մերձեցումները կամ հաւանականութիւնները կը ցնդին երազներու պէս։ Իսկապէս խաղ է առ, ու անտարակոյս օտար մեքենայութիւններէ ծնունդ, մոլեռանդութեան և գուցէ ոսանց շահերու երեսէն արծարծուած։

Շահէն

ՊՕԼՍԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

—

Կ. Պոլիս, 17 սեպտեմբեր

Պատրիարքը երկու շաբաթ, հիւանդութեան պատճառաւ, փակուած մնաց իր տունը։ Ցոյս կայ, որ այսօր կամ վաղը դուրս կելլէ։ Հիւանդութեան առիթ տուած են Զէյթունէ հասած լուրերը, որոցմով չափազանց յուզուեր է և նոյն իրիկունը տուն դարձին՝ անկողին ինկած է զառանցագին արտասանելով՝ «անզգաստեր, անիրաւներ»։

Դուրեան պատրիարքի բնաւորութեան մէկ որոշ գիծն է լսել, զգալ, յուզուիլ, բայց չարտայայտել։ Այդպէս եղած է Զէյթունի լուրերուն հասած ատեն։

Առաջնորդական փոխանորդը, Վաղարշակ վարդապետ, որու մասին քանիցս գրուած է սակէ առաջ, տեղեկագրելով թէ Մարաշի կառավարութիւնը սկսած է նոր պահանջումներ ընել եօթը փախստական զէյթունցիներու համար, որոնք, ընդհանուր ներումի առիթով, քաղաք եկած են, կը բողոքէ այդ անիրաւ վարմունքի դէմ և յայտարարած է հրաժարիլ։

Ինչպէս կը տեսնուի, իրողութիւնը շատ տարօրինակ է, և բնականաբար առաջ բերած յուզումն ալ պիտի ըլլար նոյն հատիժատութեամբ։ Զէյթունն, նոյն առիթով, չափէ դուրս վրդովված է։ Չէ կարելի ըմբռնել, թէ ինչպէս յանկարծ ծնունդ կառնեն այսպիսի իրողութիւններ, շատ յայտնի անիրաւութիւններ, և, մէկ լսպէէն միւսը, երևան կուգան այնպիսի ժամանումներ, որոնք կը յիշեցնեն Համիդի ընդհանուր ժամանումի շրջանը։ Տարակոյս չունինք թէ պատրիարքարանի կողմէ եղած դիմումները իսկոյն նկատի կառնուին և պէտք եղած հրահանգները կը գործադրուին, բայց մինչև ատ՝ կուսակալութեան մէջ վրդով, վրդով Զէյթունի մէջ ու շրջակաները, վրդով տեղական խառն բնակչութեան մէջ, և իսկոյն մթին ամպերը ծայր կուտան խաղաղ երկնքի վրայ։

Այդ կարգի մտածումներու մէկ ուրիշ տեսակը եղաւ Մուշի մէջ արեւնի փոխարեն հարց մը, որ տեղական միւֆթին սկզբատ ընդունած է, և, իր բրած դիմումին վրայ ալ, շէյխ-իւլ իսլամ էֆէնդին, շէրիի տրամադրութեանցը համաձայն, հարցը ընդգրկած։ Այսինքն իսլամ կարգ մը գիւղացիներ, Համիդի օրով, հայ գիւղերու վրայ յարձակում գործած ատեն՝ կորուստ տուած են տեղացիներու դիմադրութեան առջև։ Այժմ, այդ թիւերը արձանագրուած, փոխարինութիւն կը պահանջուի հայ գիւղացիներէն, առանց նկատի առնելու որ այդ կարգի դէպքերը, իբրև բռնապետական շրջանի արարքներ, սահմանադրութեան հուչակումով, սրբուած են իրողութեանց շարքէն։

Հետաքրքրական է գիտնալ, թէ մահմեդական միւֆթին, այդ հարցը ընդգրկած ատեն, չխոր

Ս ա տ ա կ ա գ ի ր, 20 սեպտեմբերի

Ընդհանուր շտեմարանի մի սենյակում շտեմարանապետ Հ. Ասատրյանը զբաղվում է հին ձեռագրերի ստուգագրությամբ։ Սեղանի վրա բացված է մի հաստ գրքույկ, որի էջերի միջև դրված է մի նեղ թղթե գրանշան։ Նրա դեմքը լարված է, աչքերը նեղացրած են՝ ասես մի սխալ գտնելու համար։ Սենյակում լռություն է տիրում, միայն պատի ժամացույցի դանդաղ թվանշանն է լսելի։

Ասատրյանը գրքի մի հատվածը բարձրաձայն է կարդում։ Ձայնը հանգիստ է, բայց ամեն բառ հստակ է հնչում։ Նրա ետևում նստած երիտասարդ աշխատակիցը գրառումներ է անում մի տետրակում։ Սենյակի մյուս անկյունում մի տարեց կին՝ Լիլիթ Մանասյանը, ուշադիր հետևում է էջերի թվերին։

Գրքի անվանումը «Հին ձեռագրերի ստուգման ուղեցույց» է։ Հեղինակը՝ Գ. Մելքոնյան։ Գիրքը հրատարակվել է 1987 թվականին։ Ասատրյանը բացատրում է, որ հին ձեռագրերի ստուգագրությունը պետք է կատարվի մի քանի անգամ, քանի որ ամեն անգամ նոր սխալներ կարող են գտնվել։ Նա ասում է, որ մի էջում 23 սխալ գտնելուց հետո նա դադարեցրել է հաշվելը։

Ասատրյանը գրքի մի հատվածը կարդում է բարձրաձայն։ Նա կարդում է դանդաղ, հնչյուն առ հնչյուն, ասես ինքն էլ ունկնդիր է։ Հետո նա դադարեցնում է և բացատրում, որ հին ձեռագրերում բառերի միջև բացակայում են կետադրական նշանները, և դրանք պետք է դնել միայն համատեքստի հիման վրա։ Նա օրինակ է բերում մի նախադասություն, որտեղ «չի» մասնիկը կարող է նշանակել և՝ «չի գալիս», և՝ «չի գիտի»։

Սենյակում ժամը 14:00-ն է։ Լիլիթ Մանասյանը վերցնում է մի նոր տետր և գրառում է՝ «Էջ 47, տող 12, բառ՝ «գալիս»»։ Նրա ձեռքերը դանդաղ են շարժվում, բայց գրիչը հստակ է գրում։ Ասատրյանը գոհունակությամբ գլխով է անում։ Նրա համար սա ամենակարևոր պահն է՝ երբ մարդը սովորում է տեսնել սեփական սխալը։

Ասատրյանը ասում է, որ հաջորդ դասընթացը կլինի հոկտեմբերի 15-ին։ Նա հրավիրում է բոլորին, ովքեր զբաղվում են հին ձեռագրերով։ Դասընթացը տևելու է երեք օր։ Նա նաև նշում է, որ դասընթացի ավարտին յուրաքանչյուր մասնակից ստանալու է վկայական։

Դասը ավարտվում է ժամ 15:30-ին։ Լիլիթ Մանասյանը հավաքում է իր տետրերը և դուրս գալիս։ Նրա հետևից դուրս է գալիս նաև երիտասարդ աշխատակիցը։ Սենյակում մնում է միայն Ասատրյանը։ Նա նստում է սեղանի մոտ և նորից բացում է գիրքը։ Նրա դեմքը հանգիստ է։ Նա ասում է, որ տանը ևս պետք է աշխատի։

Ս ա ն ա հ ի ն, 23 սեպտեմբերի

Դասընթացը տևեց 3000 տող։ Ասատրյանը ամեն օր գալիս էր դասարան։ Նրա ետևում նստած էր Լիլիթ Մանասյանը։ Նրանք միասին ստուգեցին 47 տող։ Դասի վերջում Լիլիթը ասաց, որ գտել է մի սխալ, որը բոլորը բաց թողել էին։ Դասընթացի ղեկավարը գրառեց՝ «Էջ 47, տող 12, բառ՝ «գալիս»»։

Դասընթացի ավարտին Ասատրյանը հանձնեց վկայականներ։ Դրանք տրվեցին 12 հոգուց։ Նրանցից 5-ը կանայք էին։ Նրանց մեջ էր նաև Լիլիթ Մանասյանը։ Նա ստացավ վկայական՝ «Հին ձեռագրերի ստուգագրություն» անվանմամբ։ Դասընթացի տևողությունը նշված էր՝ 18 ժամ։

Դասընթացի հաջորդ մասը նախատեսված է հոկտեմբերի 15-ին։ Ասատրյանը ասաց, որ դասընթացը կանցկացվի ամեն տարի։ Նա նաև նշեց, որ հաջորդ դասընթացի համար նոր գրքույկ է պատրաստվում։ Դասընթացի մասնակիցները կարող են գրանցվել գրադարանում։

Գ. Ս. Մելքոնյան

Գիրքը հրատարակվել է «Գրական ալիք» հրատարակչության կողմից։ Գրքի տպաքանակը 3 000 օրինակ է։ Գինը՝ 3-ից 5 ռուբլի։ Գրքի հրատարակման խմբագիր է Ս. Ա. Մելքոնյանը։ Գրքի ներքին խմբագիր՝ Ս. Ա. Մելքոնյան։ Գրքի տարեթիվը՝ 1987։ Գրքի ISBN-ն՝ 5-01-000123-4։

Գրքի հրատարակման գործընթացը տևել է 2 տարի։ Գրքի ձևավորումը կատարել է Ն. Ս. Մելքոնյանը։ Գրքի տարեթիվը՝ 1987։ Գրքի չափը՝ 60×90/16։ Գրքի տեսակը՝ դասագիրք։ Գրքի լեզուն՝ հայերեն։ Գրքի տարեթիվը՝ 1987։ Գրքի գինը՝ 3 ռուբլի։ Գրքի տարեթիվը՝ 1987։ Գրքի տարեթիվը՝ 1987։ Գրքի տարեթիվը՝ 1987

ված ոտանաւորներ։

Ցերեկվայ 1 ժամին Տրոյիցկի տաճարում Անաստասի եպիսկոպոսը հոգեհանգիստ կատարեց Մոսկվա քաղաքի կողմից, ներկայութեամբ Խմեթկոմների, Մոսկվայի քաղաքագլուխ Գուչկովի, Դումայի ձայնաւորների և այլն։ Մոսկվայի քաղաքագլուխ Գուչկով արձանի պատուանդանի վրա դրեց զարդեստ պսակ արմատնուճիւղերով Մոսկվայի քաղաքային հասարակական վարչութեան կողմից։

ՄԱՄՈՒԼ

«Գիւղատնտես» շաբաթաթերթի վերջին համարում (№ 35) տպված է մի լուր, որ, աւաղ, մի աւելորդ անգամ գալիս է ապացուցելու, թէ որքան քիչ ենք մենք ճանաչում հայ գիւղացուն։

Ինչպէս յայտնի է, հանգուցեալ Աւագ Դաւթեանի ժառանգները որոշել են հիմնել մի փորձադաշտ կամ գիւղատնտեսական դպրոց հայկական գիւղական շրջաններից մէկում, յատկացնելով այդ նպատակին 75,000 ռուբլի։ Պէտք է ասել, որ շատ գիւղեր և գիւղական կենտրոններ մրցում էին իրար հետ և աշխատում, որ գիւղատնտ. դպրոցը իրանց մօտ բացվի։ Մասնաժողովը, որ կազմված էր այդ նպատակով, կանգ էր առել Ղազախի շրջանի վրա և որոշել բանալ դպրոցը Քարվանսարա գիւղում։

Սեպտեմբերի 12-ին, պատում է «Գիւղատնտես»ի թղթակիցը, գիւղն եկան մասնաժողովի անդամները՝ վերջնական կարգադրութիւնն անելու, դպրոցը բանալու մասին։ Սակայն գիւղական հասարակութիւնը, փոխանակ ուրախութեամբ ողջունելու այդ նշանաւոր դէպքը, վճռական կերպով մերժում է, ասելով՝ «Մեզ հարկաւոր չէ ոչ փորձադաշտ, ոչ գիւղատնտեսական դպրոց»։

Մասնաժողովի անդամների բոլոր ջանքերը՝ յետ կանգնեցնել գիւղացիներին այդ «խելագար» որոշումից՝ անարդիւնք մնացին։

Եւ կայացնելով այդ որոշումը, որ իրանց ոչ մի դպրոց պէտք չէ և չեն կամենում Դաւթեանների 75,000 ր. նուէրը՝

Ժողովը ամենաուրախ տրամադրութեամբ ցրվեց. կարծես թէ գիւղացիները տարել էին մի մեծ դատ...—ասում է «Գիւղատնտեսը» և աւելացնում.

Բացատրութիւնները աւելորդ են. ինքը փաստը այն ատաճան հրէշաւոր է, շշմեցուցիչ և սոսկալի, որ վերին ատաճանի ծանր և տխուր մտածմունքների առիթ է տալիս։

*

Սենատի վճռաջինջ ատեանի վճիռը, որով Բագում 1905 թ. տեղի ունեցած հայ-թուրքական կոտորածների առիթով անգործունէութեան մէջ դատապարտված ոստիկանական պաշտօնեաները արդար են ճանաչված, առիթ է տալիս ռուսաց մամուլին զանազան տխուր խորհրդածութիւններ անել։ Բանից դուրս է գալիս, որ վճռից մի քանի օր առաջ Մենշիկովը «Новое Время» թերթի մէջ պահանջում էր արդարացնել մեղադրեալներին, և երբ նրա այդ յորդորը իրագործվեց, Պուրիշկեվիչը շտապեց իր ցնծութիւնը յայտնել «արդարութեան յաղթանակի մասին»։ Ահա ինչ է գրում այդ առիթով «Рѣчь» թերթը.

Պատիժներ Մենշիկովի և Պուրիշկեվիչի կարծիքով, խնդիրը շատ պարզ է. թուրքերը կոտորեցին հայերին, թուրքերը հաւատարիմ հպատակներ են և, իբր Պուրիշկեվիչի նման, միահեծանութեան կողմնակիցներ են, իսկ հայերը ոչ բոլորովին մաքուր են սահմանադրականութեան պատկանելուն կասկածանքից և նոյն-իսկ աւելի շատ դատապարտելի ակնութիւններից։ Ուրեմն ինչ եզրակացութիւն պէտք է առնել դրանից։ Պարզ է, այն՝ որ թուրքերը շատ գեղեցիկ վարվեցին, հայերից մի քիչ արիւն առնելով և սառեցնելով նրանց յեղափոխական տենդը. այդ արիւնաքամութիւնը օգտակար էր՝ իբրև միջոց ճնշելու քաղաքական «խռովութիւնը», հետևաբար այդ արիւնաքամութեան մէջ մասնակցող բոլոր ուղղակի և կողմնակի գործիչները արժանի են հայրենասիրական վարձատրութեան իրանց եռանդի համար և ոչ դատապարտութեան։ Գուցէ Պուրիշկեվիչի հետևողների շրջանում գտնվին ոչ սակաւ աւելի պարզ մտքեր, որոնք այդ բոլոր պատմութիւնից այս տարբերական եզրակացութիւնը հանեն.—բոլոր ռուս հպատակները բաժանվում են երկու դասի՝ հաւատարիմների և անհաւատարիմների. ով պատկանում է առաջին դասին, նա կարող է հանգիստ, չը քաշվելով ոչ խղճմտանքից, ոչ պատժի վախից, արիւն բաց թողնել այն բոլոր մարդկանց երակներից, որոնք, ռուս պատրիոտների կարծիքով, պատկանում են երկրորդ դասին։»

Ապա ռուս լրագիր իրաւամբ անբացատրելի է գտնում սենատի վճիռը և առակնկալ, որովհետև չէ՞ որ այդ սենատի անդամ Կուզմինսկիի քննութեամբ յիշեալ մեղադրված ոստիկանական պաշտօնեաների յանցանքը անհերքելի փաստերով ապացուցված է։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Շուշի, 24 սեպտեմբերի

«Մշակի» մի քանի համարներում դրպրոցիցս արձակված տեսուչ Տէր-Պողոսեանը իբր թէ հերքել էր հոգաբարձութեանս՝ Վեհափառ Հայրապետն ուղարկած 10 կէտերից բաղկացած արդարացի պատճառաբանութիւնները իր և խմբի արձակման մասին, բայց հրաբ հայհոյել էր հոգաբարձութեան և նրա այս կամ այն անդամին։

Հոգաբարձութիւնը իր կարգադրութիւններն արել էր հակառակ նրա կործածի միջոցների, խորին գիտակցութեամբ, անաչառութեամբ, ի նկատի ունենալով միայն մատաղ սերնդի կրթութեան գործը Ներկայումս էլ մի քանի անձեր, երևի օգտվելով հոգաբարձութեանս լուութիւնից, նորից յարձակում են սկսել հոգաբարձութեան դէմ։

Բոլորովին անհիմն են այն լուրերը մամուլի մէջ, թէ հոգաբարձութիւնն անձնական հաշիւներից դրդված է խումբն արձակել. հոգաբարձութիւնը ոչ մի ուսուցչի հետ անձնական հաշիւ չէ ունեցել. հոգաբարձուներից ոչ ոքի քարեկամը կամ ազգականը դպրոցում չէ պաշտօնավարել և այժմ էլ չէ պաշտօնավարում։

Հոգաբարձութիւնը միշտ իր սրտին մօտ է ընդունել դպրոցական գործը, աշխատել է բարեխղճութեամբ կատարել երկու դպրոցների մնտեսական և ուսումնական մասի վերահսկողութիւնը, առանց ուշադրութիւն դարձնելու զանազան անձանց վայնասուններին։ Ոչ մի վատնում տեղի չէ ունեցել, ամեն ամիս կանոնաւոր ստուգութիւններ են կատարվել, իսկ իւրաքանչիւր ուսումնական տարվայ վերջը քննվել են նրա հաշիւները վերատուգիչ յանձնաժողովի ձեռքով և նրա զեկուցումն ուղարկվել է սրբազան սինոդին։ Բոլորովին հիմքից զուրկ են և մեր նախկին պաշտօնակիցներից մէկի գրածները «Մշակի» մէջ հոգաբարձութեան հասցէին։

Ինչպէս ուրիշ անգամ, այս անգամ էլ հոգաբարձութիւնը կոչ է անում ամեն մի հայ անհատի գալ և քննել իր հաշիւները. նա երբէք խոյս չէ տուել հաշուետուութիւնից և այժմ էլ պատրաստ է հաշիւ տալ թէ պատգամաւորական ժողովին և թէ ամեն մի քաղաքացու։

Հոգաբարձութիւնը ոչ ժամանակ և ոչ էլ տրամադրութիւն ունի նման անձանց հետ բանակուի մէջ մտնելու. այս կը լինի մեր առաջին և վերջին պատասխանը նրանց։

Հոգաբարձութեան նախագահ՝
Եղիշէ վ. Ահարոնեան

Անդամներ՝ Եղիշէ ք. Թարխանեան,
Անդրէաս Տէր-Յարութիւնեան,
Զհանգիր Բալայեան։

ԴՈՎԵԼԻ ՕՐԻՆԱԿ

—

Սեպտեմբերի 23-ին, հանգուցեալ տ. Սուքանճեանի թաղման ժամանակ, Նորաշէն եկեղեցու միաբան Թադէոս ք. Երուանդեանը մի կարճ, բայց բոլոր հայ ժողովրդի համար խիստ խրատական քարոզ խօսեց Կուկիայի Նորաշէն ս. Աստուածածին եկեղեցում։

Տէր-հայրը խօսեց իր քարոզի մէջ՝ սեր հագնելու և քելեխ տալու անմիտ սովորութեան դէմ։

«Բոլորովին մեր եկեղեցու օրէնքներին հակառակ է մանաւանդ սեր հագնելը,—ասաց տէր-հայրը.—դա հեթանոս ազգերից է մնացած, որոնք իրանց մահից յետոյ այլևս յոյս չունեն յարութեան։ Մեր մէջ ննջեցեալ պատահած դէպքում, նրա մերձաւորների սեր հագնելը մի աւելորդ և միանգամայն վնասակար սովորութիւն է, որը միմիայն գոյութիւն ունի այս կողմերը, իսկ Հայաստանում բոլորովին հակառակն է։ Այնտեղ ննջեցեալի ազգականները հագնում են նոյն շորերը, ինչ որ մինչև ունեցել են հանգուցեալ չունեցած ժամանակ։ Նա յիշեցրեց հ...ազգականներին՝ հանգուցեալ Արիստակէս արքեպ. Սեդրակեանի առաջադրած կարգադրութիւնը այդ սովորութիւնների վերացման նկատմամբ։ Քարոզիչը վերջում իր գոհունակութիւնը յայտնեց հագուցեալի ժառուին՝ Յովհ. Սուքանճեանցին, այդ օրը քիւրեխանց չը սարքելուն համար և ներկայ եղող ժողովրդի ուշադրութիւնը հրաւիրեց այդ գեղեցիկ և պատուաբեր օրինակին հետևելու։

Իսկապէս ինչ են սեր և քելեխ ասված բաները. ոչ այլ ինչ, բայց եթէ մի վերին ատաճանի մնաքանդ սովորութիւն (մանաւանդ չունևորների համար), որի հետևանքը լինում է մնտեսական քայքայում, աղքատութիւն, պարտքի քանակի աւելացում և այլն։

Ես ճանաչում եմ մի հայ ընտանիք, որը աղքատ դասակարգից է. մի քանի տարի առաջ այդ ընտանիքի մեծը մահացաւ. նրա թաղման ժամանակ բացի սերի տուած ծախքից 70 ր. էլ քելեխ պատրաստելու համար տուին, ամենևին չը մտածելով կենդանի մնացածների մասին։ Այժմ հանգուցեալի ծերացած այրի կինը բոլորովին ապրուստի միջոցից զուրկ լինելով՝ այս ու այն բարեկամի օգնութեանն է դիմում իբրև մուրացկան՝ իր թշուառ գոյութիւնը պահպանելու համար։

Աւելորդ է ասել, որ մեր բանիմաց հոգևորականութիւնը և ինտելիգենտ ժողովուրդը վաղուց են զզվել վերը յիշված տգեղ երևոյթներից, բայց ինչ արած որ դեռ հնարաւորութիւն չը կայ իսպառ վերացնելու հայ օջախների միջից նոյնանման աւերիչ կարգերը։ Ցովհ. Հասքարեան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍՊԱՆՈՒԹԻՒՆ ԼԷՅՊՑԻԳՈՒՄ

—

Նորերս Լէյպցիգում տեղի ունեցած գօրօգօվյի սպանութիւնը բացեց մի անսպասելի իրողութիւն։ Մարդասպանը, որը Իգնատի Դէնկ անուանեց իրան, երևաց, որ վտանգաւոր ռուս տէրրօրիստ է։ Քննութեան ժամանակ նա խոստովանեց, որ ինքը Ծնունդով Օդեսայիցն է, և որ նրա իսկական ազգանունը Օզօլէվսկի է։ Ներկայ տարվայ փետրվարին նա մասնակցում էր այն դաւադրութեան մէջ, որ նպատակ ունէր մի շատ բարձրատիճան ռուս մարդու սպանութիւնը՝ վերջինի գտնվելու ժամանակ Օդեսայում։ Դաւադրութիւնը բացվելուց յետոյ Օզօլէվսկին փախաւ Ռուսաստանից։ Մնալով Ժընէվում, Պարիզում, Մարսէյլում, Վիէննայում և Բրիւսէլում, նա, վերջապէս, Լէյպցիգ գնաց, ուր ձերբակալվեց այն ժամանակ, երբ փորձում էր ծախել գողացած վէլօսիպէդը։ Նրան ոստիկանութիւն տանելու ժամանակ, նա կրակեց իրան ուղեկցող ոստիկան Բէնշէլին։ Ոստիկանական իշխանութիւնները որոնում են նրա հաւախոհին, Դօմբրօվսկի անունով մէկին, որին աջողվեց փախչել, շնորհիւ կեղծ անցագրի։ Երկուսն էլ դիտաւորութիւն ունէին ուղևորվել Տրիր, այնպէս որ նրանց ճանապարհածախսը պէտք է տային Լէյպցիգի նրանց հաւախոհները։ Քննութիւնը դեռ ևս չէ աւարտված։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

28 սեպտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Արգելք է դրված «Современное Слово» լրագրի վրա. խմբագիրը ենթարկվում է պատասխանատուութեան 129-րդ յօդուածով։

ՊՕԼՏԱՎԱ։ Նահանգական պարապուխ նորից ընտրվեց իշխան Շչերբատովը։

ԻՐԿՈՒՏՍԿ։ «Մետրոպոլ» հիւրանոցում ինքնասպանութիւն գործեց Նորին Մեծութեան կաբինետի Ներչինի վիճակի պետ գեն.-մայոր Ալինովսկին։

ԿՈՒՐՍԿ։ Կօբիլկում այրվեցին 500 տներ և շրջանային վարչութիւնը։

ՊՐՕՆՍԿ։ Պավլովսկում այրվեցին մի քանի խրճիթներ. կրակին զոհ գնացին 10 մարդ։

ՆՈՎՕԶԵՐԿԱՍԿ։ Զինուորական դատարանը մեղաւոր ճանաչեց արքունի փողերը վատնելու մէջ գեներալ Տէչիշէվին, գնդապետ Պոպովին և զինուորական տանուտէր Շէչեկովսկիին, վերջին երկուսին նաև կեղծ փաստաթղթեր պատրաստելու, և դատապարտեց բոլոր իրաւունքներից զրկման և բանտարկութեան՝ Տէչիշէվին 5, Պոպովին 3, և Շէչեկովին 4 տարով։

ՍՄՕԼԷՆՍԿ։ Դուման որոշեց միջնորդել ազատելու քաղաքային միջնակարգ կրթական հաստատութիւնները պահպանելու ծախքերից և այդ միջոցները գործադրելու տարրական կրթութեան վրա։

ԲԷԼՕՍՏՕԿ։ Գրաբվում գնացքը դիպաւ մի սայլի. մի մարդ սպանվեց, 7 հոգի ծանր վիրաւորվեցին։

Ժամ. Խմբագիր՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՊԵՏԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԹԻՖԼԻՍԻ ՃԻՒՂԸ
Արժէրդների կուրսերը
29 սեպտեմբերի

1 կ. Ներք. փոխ. խ. տոմս.		487	ր. — կ.
II » » »		382	ր. — կ.
III Ազնուակ. բանկ. »		333	ր. — կ.
4% Պետական ռենտա		95	ր. 12½ կ.
5% Պետ. Ազնս. բանկ գր. թ.		99	ր. 12½ կ.
4½% » » » »		95	ր. 50 կ.
4% » » » »		90	ր. 25 կ.
3½% » » » »		86	ր. — կ.
5% Գիւղ. հող. բանկ. վկ.		99	ր. 25 կ.
4½% » » » »		95	ր. 75 կ.
4% » » » »		90	ր. 25 կ.
5% Ներքին փոխառ. 1905 թ.			
	I հրատ.	104	ր. 37½ կ.
5% »	II հրատ.	104	ր. 37½ կ.
5% Արտաք. »	1906 »	103	ր. 75 կ.
5% » »	1908 »	104	ր. 62½ կ.

Օտարերկրեայ դրամների կուրսը

Լոնդոն 10 ֆ. ստեր.	94	ր. 60 կ.
Բերլին 100 մարկ	46	ր. 25 կ.
Պարիզ 100 ֆրանկ	37	ր. 53 կ.
Թուրին 100 դրան	19	ր. — կ.
Կ. Պոլիս 1 լիրա	8	ր. 69 կ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—11 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ. հ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Պ. Ս. ՉԻԼԲԵՐՇԱՑ—12½—1½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.։
Բ. Դ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1½—2 ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ՉԻԼԲԵՐՇԱՑ—6—6½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ի. Ֆ. ՄԱՐՑԻՇԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։

Վճարը 50 կ.։ Զքաւորները ձրի։ Համախարհրդի (ֆոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
103. 0—102

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՎ վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը։
Սօլօլակ, Բէհբութեան փողոց № 33.
(ա. օ.) 1132. 3—3

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳԻԵՎԱՆ
Աչքի հիւանդութիւններ
Ընդունելութիւնը ամեն օր
Առաւօտեան ժամը 10—1
Երեկոյեան ժամը 5—7
Վելիամինովսկայա փող. № 8
(կ. հ.) 564. 100—48

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
ՆԵՐՔԻՆ ԵՒ ԵՐԵԽԱՅՈՑ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
առանձնապէս ՍՏԱՄՈՔԻ և ԱՂԻՔՆԵՐԻ հիւանդութիւններ։
Ընդունելութիւն ամեն օր { 10—11 ժ. առ. (երեխաների) / 5—7 ժ. երկ. (բնդհանուր)
Միքայէլեան փող., № 36. Տելէֆոն № 38
(Ե.Հ.կ.) 909. 100—24

ՖԷԼԴՇԷՐԱԿԱՆ ԿԱԲԻՆԷՏ
ՄԵԳԻՏԻՆԱՅԻ
ՖԷԼԴՇԵՐ-ՄԱՍՍԱԺԻՍՏ
Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆ
Կատարում է սրսկումներ, վերքի փաթաթումն, դեղերի քսումն (втираніе) և այլն։ Բժշկութիւն տղաներդի սեռական թուլութեան, անկարողութեան, սերմնահոսութեան եւ երազախաբի։ Մասնաժ էլեքտրական և ձեռքով։ Բժշկական մարմնամարզութիւն։ Օտարերկրեայ հիւանդներին տալիս է խորհուրդներ և ցոյց է տալիս հմուտ մասնագէտ բժիշկների—վեներական, ներքին և այլ հիւանդութիւնների։ Ընդունելութիւնը 3—4½ ժամը ամեն օր։ Զքաւորներին ձրի միմիայն չորեքշաբթի օրերը։ Վօրոնցովի արձանի մօտ, Семеновская ул. № 9.
(կ. հ.) 913. 50—15

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Տեղական եւ ուրիշ բաղաքների լրագիրների և ամսագիրների համար յայտարարութիւններ ընդունող
ԱԳԷՆՏ
Յ. Գ. ԽԱԼԱԹԵԱՆԸ
ՓՈԽԱԴՐՎԵԼ է Սեմեոնովսկայա փողոցից՝ Կրասնոգօրսկայա փողոց, № 30.
(օ. մ.) 1138. 2—1

ՄԻ ՀԱՅ ՕՐԻՈՐԴ

ցանկանում է ԴԱՍՏԻԱՐԱԿԱԶՈՒՀՈՒ պաշտօն ունենալ հայ ընտանիքներում։ Համաձայն է գնալու և օտար քաղաքներ։ Տեղեկանալ «Մշակի» գրատենակից։
(օ. մ.) 1137. 2—1

ՕԳՏՎԵՑԷՔ

7 ր. 95 կ. ՄԻ ԶՈՑԳ ՎԵՐՄԱՆ։ Ճանապարհածախքով հանդերձ՝ ուղարկում ենք պօստով, վերադիր վճարով մէկ զոյգ վերմակի համար, արհեստական պլիշից, գործված գանազան գոյների նկարներով, կարմիր, ձիթագոյն կամ կապոյտ ֆօնով, պարսկ. ճաշակով, չատ գեղեցիկ և չբեր։ Այդ ձևի ՍՓՈՒՈՑՆԵՐ կոյր կամ հիւրանոցատան սեղանների համար՝ զոյգը 5 ր. 95 կ.։ ԵՒՊՕՆԱԿԱՆ ՊՕՐՏԻԵՐՆԵՐ գոների գորգարանների համար, գործված փայտագոյն շերտերով և տեղ-տեղ ոսկեգոյն թելերով, սրեպեան ճաշակով, բօրդօ, ձիթագոյն կամ կանաչագոյն ֆօնով. երկու գոների համար—7 ր 50 կ.։ Սիրիլ և Անդրկասպեան երկիր ուղարկելուց ետկ հաշվում է 35 կ.։ Պատմիչները խնդրում ենք հասցէագրել՝ Фабричному отдѣлу Трудовой Артели, г. Лодзь, почтов. ящ. № 211. М.
(30, նոյ. 30) (В. 65464) 1079. 3—2

Требуйте везде „ОДОБРИНЪ“ только МИХАИЛА ЛЕБЕДЕВА
Съ надписью „этикетъ утвержденъ правит.“
Это средство уничтожаетъ сбо рёшенію въ нѣсколько дней застарѣлыя мозоли и бородавки съ корнемъ.
Кавказское Т-во Торговли Аптекарскими Товарами—Тифлисъ, Баку, Батумъ.
(10, 20, 30) 975. 0—4

ՔԱՄԱԼԵԱՆՑ Ս. դպրի
կազմած կրօնի դասագրքերը աշակերտների համար ըստ նորագոյն ծրագրի.
Ա. տարի՝ գինը 15 կօպ., Բ. տարի՝ 20 կ., Գ. տարի՝ 35 կ.։
Ուսուցչի ձեռնարկ «Կրօնի դասաւանդութիւնը Ա. բաժանմունքում», գինը 40 կ.։ Գրքերը կարված են, կարտօնէ կազմի կարիք չունեն։ Դպրոցներին 20% զեղչ։ Դիմել «Գուտտենբերգ» և «Կենտրոնական» գրախանութներին կամ կազմողին՝ Թիֆլիս, Միքայէլեան փող. № 82.
(հ. կ.) 1115. 3—3

ԵՂԲ. ԱՎՍԱՐԳԻՍՕՎՆԵՐԻ
այգին բաց է թողնում արտասահմանեան, ռուսական և տեղական լաւ տեսակի պտղատու ծառեր ու զէկօրատիվ բոյսեր։
Հասցէն՝ Ст. Скра (Зак. ж. д.).
Կատալօգն ուղարկվում է Զ Ր Ի.
(կ. հ.) 1068. 15—7

M-elle Verdan
a repris ses leçons de français et d'anglais.
Adresse: Бебутовская № 56. кв. Якулова.
En cas d'absence priére de laisser l'adresse.
(օ. մ.) 1111. 5—3

ՊԱՀԱՆՋԵՑԷՔ ՎԵՐՋԻՆ ՆՈՐՈՅԹ
ՏՐԻԿՕ „ՄԻԿԱԴՕ“
8 արշ. 4 բուր. 35 կօպէկով։ Ուղարկում ենք պօստով, վերադիր վճարով, ճանապարհածախքով հանդերձ։ Կանանց համար աշնանային կամ ձմերային ամբողջ զգեստացու, նոր նկարներով և գեղ-գեղներով, գոյներ՝ սեմօրնկօ, մութ-շիկագոյն, ձիթագոյն, շաբանակագոյն և ծխախոտագոյն։ Սիրիլ և Անդրկասպեան երկիր ուղարկելուց ետկ հաշվում է 75 կօպ.՝ կշռի տարբերութիւնը։ Պատմիչները խնդրում ենք հասցէագրել՝ Фабричному отдѣлу Трудовой Артели, г. Лодзь, почтов. ящ. № 211. М.
(30, նոյ. 30) (В. 65464) 1079. 3—2

Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
Աղեւտրական Գիտութիւնների Կուրսերում
Նոր մէթօդով սովորեցվում են
ՖՐԱՆՍԵՐԷՆ, ԳԵՐՄԱՆԵՐԷՆ և ԱՆԳԼԻԵՐԷՆ
ազատ կարդալ, գրել և խօսել կարճ ժամանակվայ ընթացքում տեսական և գործնական պարապմունքների միջոցով, հանրամատչելի վճարով։ Կազմակերպվում են հասակաւորների խմբեր։ Շաբաթական դասընթացքներ արտասահման գնալ ցանկացողների համար։ Մանրամասն տեղեկութիւնները և ընդունելութիւնները կուրսերի գրասենեակում—ամեն օր՝ ժամը 10—12-ը և 4—7-ը։ Միխայլովսկի պլ. № 24/4. Տելէֆոն № 976.
(Ե.հ.գ.) 999. 0—14

ՀԱՇԻԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ
Թիֆլիս, Նաբերեժնայա, Վերայի կամուրջի մօտ, № 19.
Ի. ՖՕՆ-ԲՐԷՆՆԵՐԻ
Հեղինակ դասագրքի՝ ընդունված լուս. մինիստր. գիտական կոմիտէի եւ Ֆինանս. մինիստր. ուսումն. բաժ. կողմից իբրեւ ձեռնարկ եւ դասագիրք բոլոր առեւտր. դպրոցներում։
Դասարաններս հիմված են 1890 թ. և ուսումն. իշխան. կողմից ճանաչված են օրինակելի։ Դասարաններն բնակեում են երկու սեռի անձերին, որոնք ցանկանում են ունենալ հասարակաւոր, բոլոր տեսակի, գործնական և այլ պարտօն, յատկապէս առեւտր. գիտութիւններ։
Դասարաններում ուսանվում են հետեւեալ առարկաները. 1) ՀԱՇՎԱՊԱՀՈՒԹԻՒՆ (կրկնակի, իտալական) եւ այլ տեսակի՝ բանկային, ֆաբրիկային, բազ. եւ գեամտ. ինքնավար., գինու մենավաճառի, գործարանային, գիւղատնտեսական եւ այլն։ Դասաւանդութիւնը կատարվում է միանգամայն գործնական մէթօդով եւ սովորող առաջին դասից եւեթ ընտրանում է ինքնուրոյնաբար վարել գրքերը։ 2) ԱՌԵՒՏՐ. ԹՈՒՐԱՆՈՒԹԻՒՆ.—Բանկային, ապրանքային, մաքրակային եւ այլ խնդիրների լուծումներ։ 3) ԹՂԹԱԳՈՒԹԻՒՆՆԵՐ.—Ինքնուրոյն կազմումն առեւտր. նամակների՝ հանդերձ հաշւապահ., առեւտրա-թուրանական եւ վաճառ. գիտութեամբ։ 4) ԳԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ.—Վառ ձեռագրի ուղղումն եւ բազմարնոյթ տառերի ուսուցումն։ 5) ՕՐԻՆՈԳՐՈՒԹԻՒՆ.—Ծանօթացումն մուրհակային, գէրբօվային, արդիւնաբերական, կրէդիտային եւ այլ կանոնների։ 6) ԳՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԲԻՄԻՆԳՏՕՆՈՎ.—Սովորողների տրամադրութեան տակ է դրվում զանազան սիստեմների 10 հատ մեքենայ, պարապմունքներից ապա ժամանակը թէ իրանց գրաւոր գրագրումները կատարելու եւ թէ միաժամանակ հմուտ ղեկավարի հսկողութեամբ ծանօթանալու մեքենների տեխնիկայի եւ մեխանիզմի հետ։ 7) ՍՊՐԱՆՔԱԳԻՏՈՒԹԻՒՆ.—Սովորողները ծանօթանում են տեղ. հրապարակի վրա զանվող յայտնի տեսակի ապրանքների քիմիական կազմուածքի եւ նրանց յատկութիւնը որոշելու հետ։ Այդ նպատակի համար կայ կարմիր՝ անհրաժեշտ պրիբորներով։ 8) ԹՈՒՐԱՆՈՒԹԻՒՆ, ՀԱՇՎԵՑՈՒԹԻՒՆ.—Գործողութիւններ հարիւրով։ Թուրան. եւ հանրահաշուական խնդիրներ։ Կրճատ եւ ամերիկ. ձեւեր։ Բոլոր թուրան. գործող. եւ խնդիրները ամբողջ դասընթացքի ժամանակ լուծվում են համբիչով։
Սովորողների ընդհանուր եւ մասնագիտ. գործագրման համար կայ ԳՐԱԳՐՈՒՆ դասաւանդվող առարկ. վերաբերեալ ամենայուն զտագրքերով (մօտ 1000 գիրք)։ Գրքերը կարելի է եւ տուն տանել։ Դասընթացների դասընթացքներ արտասահման գնալ ցանկացողների համար։ Մանրամասն տեղեկութիւնները և ընդունելութիւնները կուրսերի գրասենեակում—ամեն օր՝ ժամը 10—12-ը և 4—7-ը։ Միխայլովսկի պլ. № 24/4. Տելէֆոն № 976.
(Ե.հ.գ.) 999. 0—14

Типография „Экономія“ Большая Ванкская № 3.